Ուրախութեամբ պարզաբանում ես ուրիշի արարքները, բայց չես կամենում, որ ուրիշները պարզաբանեն քո արարքները։

—

Կան մարդիկ, որոնց ամբողջ աշխարհը գովում է, բայց որոնք ոչ թէ արժանաւորութիւններ ունեն, այլ միայն հաճելի թուլութիւններ։

—

Կեղծ պարզութիւնը—նուրբ երեսպաշտութիւն է։

—

Մենք միշտ սիրում ենք նրանց, որոնք զարմանում են մեզ վրայ. բայց ոչ նրանց, որոնց վրայ մենք ենք զարմանում։

—

Մի կարծիր, թէ դու միշտ գիտես այն, ինչ ուզում ես։

—

Կան յիմարութիւններ, որոնք վարակիչ են, ինչպէս հիւանդութիւնը։

—

Անվայել է իր անձով հպարտանալ, իսկ ուրիշներով հպարտանալը ծիծաղելի է։

—

Կան մարդիկ, որոնց ճակատին գըրված է յիմար լինել։

—

Միայն ատելութեան արժանի մարդիկ են վախենում ատելի լինելուց։

—

Միայն նրա համար ենք խոստովանում մեր փոքրիկ պակասութիւնները, որ կարծեն թէ մեծ պակասութիւններ չունենք։

—

Մենք ենթադրում ենք, որ առողջ դատողութիւն միայն նրանք ունեն, որոնք համակարծիք են մեզ հետ։

—

Փոքրիկ մարդիկ վիրաւորվում են փոքրիկ բաներից. մեծ մարդիկ տեսնում են այդ բոլորը, բայց չեն վիրաւորվում։

—

Ուրիշի փառասիրութիւնը նրա համար է մեզ այնքան ատելի, որ դա վիրաւորում է մեր սեփական փառասիրութիւնը։

—

Կան վատ յատկութիւններ, որոնք ստեղծում են մեծ տաղանդներ։

—

Չէ կարելի բոցավառ կիրքով ցանկանալ այն, ինչ որ խելքով են ցանկանում։

—

Ինչքան էլ հազուագիւտ լինէր իսկական սէրը, բայց և այնպէս նա այնքան հազուագիւտ չէ, որքան իսկական բարեկամութիւնը։

—

Ուղղամիտ մարդու համար աւելի հեշտ է գլխանել անուղղամիտ մարդկանց, քան թէ ղեկավարել նրանց։

—

Կան այն աստիճանի դատարկ մարդիկ, որոնք նոյնքան քիչ պակասութիւններ ունեն, որքան և առաւելութիւններ։

—

Մենք յաճախ կամաչէինք մեր ամենալաւ արարքների համար, եթէ աշխարհն իմանար նրանց շարժառիթները։



ԳԵՆԵՐԱԼ ԼԱԶԱՐԵԱՆՑ

## IV Ժամանակագրութիւն:

### 1) Համաշխարհային նշանաւոր անցքերի եւ պատմութեան:

#### Քրիստոսի ծննդից առաջ:

3254 Ջրհեղեղ:
2941 Չինացոց տառերի գիւտը:
2640 Նինուէի հիմնելը:
2300 Եգիպտոսի թագաւորութեան հիմնելը:
2000 Մետաքսի գործածութիւնը:
1700 Եգիպտացոց մեհենական գրերը:
1750 Բաբելոնի աշտարակաշինութ.
1651 Մովսէս մարգարէն ծնւում է:
1500 Աթենքի հիմնարկութիւնը:
1200 Դարբնական արուեստի սկիզբը:
1150 Տպագրութիւնը Չինաց մէջ:
1056 Դաւիթը թագաւորում է:
1017 Սողոմոնը թագաւորում է:
1010 Սողոմոնի տաճարի շինութիւնը:
982 Սողոմոնի մահը:
800 Արծաթ փողի գործածութիւնը:
802 Ասորեստանի թագաւորութեան անկումը:
754 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը:
721 Իսրայէլացոց թագաւորութեան անկումը:
585 Երուսաղէմի աւերումը և տաճարի այրումը Նաբուգոդոնոսորից:
560 Կիւրոսը հիմնում է Պարսից տէրութիւնը:
558 Կոնֆուցիոսը ծնվում է:
552 Բուդդայականութեան սկիզբը Հնդկաստանում:
523 Աստուածաշունչը թարգմանվում է յոյն լեզուով 70-ից ձեռքով:
469 Սոկրատէսը ծնվում է:
384 Արիստոտէլը ծնվում է:
356 Աղէքսանդր Մակեդոնացին ծնվում է:
325 Աղէքսանդր Մակեդոնացին Հայաստանի վերայով արշաւում է Հնդկաստան:
315 Չինական պարսպի շինութեան սկիզբը:
160 Չինացիք բամբակից թուղթ են շինում:
110 Հռոմայեցիք հնարում են սապոն եփելը:
76 Կիկերոնի ժամանակ Տիրոնը հնարում է շուտ գրելու ձևը:
70 Վեզուվի հրաբուխի ժայթքումը Հերքուլանում և Պոմպէի քաղաքների աւերումը:

#### Քրիստոսից յետոյ:

Քրիստոսը ծնվում է:
33 Քրիստոսը խաչվում է:
41 Առաքեալները սկսում են գրել աւետարանը:
60 Հռովմայ մէջ Ներոն թագաւորի ժամանակ շինվում է ապակու (ամանեղէնի) առաջին գործարանը:
67 Պետրոս և Պօղոս Առաքեալները նահատակվում են:
70 Տիտոս կայսրը աւերում է Երուսաղէմը:
97 Յովհաննէս աւետարանիչը գրում է Եփեսոսում աւետարանը:
135 Հրէայք սկսում են ցրուել ամբողջ աշխարհում:
210 Հռովմում առաջին անգամ, լուսամուտների մէջ ապակի է դնվում:
300 Մեղրամոմից ճրագ են շինում:
305 Սուրբ Էջմիածնի հիմնելը:
306 Մեծն Կոստանդիանոս թագաւորում է:
321 Մարտի 7-ից Կիւրակին տօնելը սկսվում է:
325 Առաջին տիեզերական Սբ. ժողովը Նիկիայում Կոստանդիանոսի օրով:
328 Կ. Պօլսոյ հիմնարկութիւնը:



381 Կ. Պօլսոյ տիեզերական Սբ. ժող.:
400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածութիւնը սկսվում է:
431 Եփեսոսում երրորդ տիեզերական Սբ. ժողովը:
451 Քաղկեդոնում չորրորդ տիեզերական ժողովը:
476 Հռովմէացւոց կայսրութեան անկումը:
496 Ֆրանկները ընդունում են քրիստոնէութիւնը:
550 Շերամի որդն ու մետաքսը առաջին անգամ Եւրոպայ է բերվում:
570 Մահմեդը ծնվում է:
636 Եւրոպայում եղեգէ գրչի տեղ փետրէ գրիչ են սկսում գործածել:
637 Արաբացիք տիրում են Երուսաղէմին:
650 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելը սկսվում է:
711 Իսպանիան գրաւվում է Արաբներից:
807 Չինացւոց պէս Եւրոպայի մէջ էլ թղթի գործածութիւնը սկսվում է:
850 Արաբացիք շաքար շինելը հնարում են:
855 Սլաւոնական այբուբենը գտնվում է:
870 Յունաց և կաթոլիկաց եկեղեցիները բաժանվում են միմեանցից:
1022 Կուիտօ Եւրոպացի երաժիշտը նօտան հնարում է:
1072 Երուսաղէմին տիրում են Սելջուկները:
1086 Խաչակրաց արշաւանքի սկիզբը:
1171 Եւրոպայի Վենետիկ քաղաքի մէջ բացվում է առաջին դրամատունը:
1246 Առաջին բժշկական ուսումնարանը Ֆրանսիայում:
1291 Խաչակրաց վերջին արշաւանքը:
1299 Ֆլորենցիայում սկսում են ակնոցներ շինել:
1301 Կողմնացոյցի գիւտը:
1308 Շվէյցարական հասարակապետութեան հիմնուելը:
1330 Գուտենբերգը, Ֆաուստը և Շեֆերը Մագունտիոյ մէջ տպագրութիւնը հնարում են:
1338 Վառօդը գտնում են:
1380 Թնդանօթի գիւտը:
1384 Լենքթեմուրի արշաւանքները Ասիայում:
1415 Հուսին այրում են:
1440 Հռովմի Սբ. Պետրոս եկեղեցւոյ հիմնարկութիւնը:
1450 Եւրոպայի մէջ առաջին գիրքը տպվում է:
1453 Տաճիկները տիրում են Կ. Պօլսին և վերջանում է բիւզանդական կայսրութիւնը:
1464 Նամակատուն և փոստայով թղթատարութիւնը հաստատվում է Ֆրանսիայում:
1473 Կոպերնիկոսը ծնվում է Տօրնում:
1483 Սկսվում է գործածվել Ինկվիզիցիան:
1492 Կոլոմբոսը գտնում է Ամերիկան (Ուրբաթ օրը, Հոկտեմբերի 13-ին):
1493 Կոլոմբոսը Ամերիկայից եգիպտացորեն է բերում Եւրոպայ:
1500 Ծոցի (անուանաւոր) ժամացոյցը հնարում են:
1524 Առաջին ձեռագիր լրագիրը Վենետիկում:
1546 Լիւտերը վախճանվում է:
1615 Առաջին տպագիր լրագիրը:
1616 Շէքսպիրը մեռնում է:
1642 Գալիլէն մեռնում է:
1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը:
1727 Նիւտոնի մահը:
1752 Ֆրանկլինը հնարում է Շանթարգելը:
1779 Օդապարիկը հնարում են:
1785 Ժոզէ Մոնգոլֆիէ առաջին շոգենաւը շինում է:

1789 Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։
1790 Գալվանը հնարում է գալվանեան ելեքտրականութիւնը։
1800 Ջօնսօնը գտնում է մարմնի պատուաստումը։
1801 Վիմագրութեան գիւտը։
1803 Անգլիացիք մետաղէ գրիչը հնարում են։
1803 Շոգենաւի գիւտը։
1805 Շիլլերի մահը։
1810 Նապօլէօնի արշաւանքը դէպի Եւրոպայի-արեւելք։
1812 Արագատիպ մամուլի հնարելը։
1821 Նապօլէօն I-ը մեռնում է։
1839 Տալբոթ անգլիացին հնարում է լուսանկարը։
1841 Առաջին տելեգրաֆը շինում են Վաշինգտոնից Բալտիմօր։
1848 Ելեքտրակ. հեռագիրը հնարում են։
1851 Առաջին ռեվօլվերը շինվում է։
1852 Նապօլէօն III-ը կայսր է հրատարակվում։
1853 Արեւելեան պատերազմը։
1861 Իտալական թագաւորութեան միացումն և Վիկտոր-Էմմանուէլի թագաւոր հրատարակուելը։
1862 Սուէզեան ջրանցքի բացումը։
1865 Գերմանական դաշնակցութիւնը և Աւստրո-Պրուսական պատերազմը։
1867 Ամերիկայից Անգլիա, Ատլանտ. ովկիանոսի վրայով տելեգրաֆը շինում են։
1868 Հնդկաստանի տելեգրաֆը Կովկասի վերայով շինվում է։
1870 Ֆրանս-պրուսական պատերազմը և Նապօլէօն III-ի գերութիւնը Սեդանում։
1870 Իտալիան վերջնականապէս գրավում է Հռոմը։
1873 Վիէննայի աշխարհահանդէսը։
1875 Հերցեգովինիայի ապստամբութիւնը։
1877 Ռուսաստանը պատերազմ է հրատարակում է Տաճկաստանին։
1878 Սան-Ստեֆանօյի դաշնադրութիւնը
1878 Բեռլինի դաշնադրութիւնը։
1879 Ելեքտրական լապտերների վառելը հնարում են։
1880 Տելեֆօնի գիւտը։
1881 Ֆօնօգրաֆի գիւտը։
1889 Փարիզի աշխարհահանդէսը։

## 2) Ռուսաց և Վրաց նշանաւոր անցքերը Քրիստոսից յետոյ։

40 Թուէն Անդրէաս Առաքեալը ու Սիմոն Քանանացին Վրաստանում մտցնում են Քրիստոնէութիւնը։
446 Վրացիք սկսում են գործածել մեր տառը Մեսրոպի հնարած այբենարանը (խուցուրին)։
597 Վրացիք հայերից բաժանվում են։
623 Հերակլ վրաց թագաւորը առնում է Հայաստանի մի մասը, Ատրպատականը և Շիրվանի խանութիւնը։
862 Ռուսաց տէրութեան սկզբնաւորութիւնը։
988 Ռուսները Սբ. Վլադիմիրի առաջնորդութեամբ ընդունում են յոյներից Քրիստոնէութիւնը։
1010 Բագրատ թագաւորը Վրաստանում և Իմերեթում եկեղեցիներ է հիմնում (Մցխեթում)։
1011 Թարգմանվում է վրաց լեզուով առաջին աւետարանը։
1212 Վախճանվում է Թամարայ թագուհին։
1222 Նիժնի-Նօվգօրոդի հիմնելը։
1224 Ջինգիս-խանի յարձակմունքները և ռուս իշխաններին նրան հպատակեցնելը։
1238 Մոնղոլական լծի սկիզբը։



1289 Օսերը Գօրի քաղաքն այրում են։
1328 Մոսկվայի թագաւորութ. սկիզբը։
1428 Հրաբձակ զէնքերի գործածութիւնը Ռուսաստանում։
1469 Վրաց թագաւորութիւնը բաժանվում է երեք մասերի՝ Քարթլ, Իմերէթ և Կախէթ։
1480 Ռուսաստանը ազատվում է Մոնղոլական լծից։
1491 Առաջին տպուած գիրքը սլաւոնական լեզուով հրատարակվում է։
1518 Պարսից Իսմաիլ-Շահը առնում և աւերում է Թիֆլիզը և Մցխեթը։ Հաւլաբարի կամրջի մօտ էլ մզկիթ է շինում։
1524 Մակարեայի տօնավաճառի բացումն։
1535 Շահ-Թամազը առնում է Թիֆլիսը։
1547 Յովհաննէս Գրօզնին առնում է առաջին թագաւորի տիտղոսը։
1556 Հաշտարխանի թագաւորութեան անկումը։
1563 Մոսկվայում սկսվում է տպագրութիւնը
1583 Ռուսները առնում են Սիբիրը։
1589 Ռուսաց պատրիարքութեան ըսկիզբը։
1611 Լեհացիք առնում են Մոսկվան, Շվեդացիք Նօվգօրօդը։
1612 Ռուսաստանն ազատվում է լեհերից։
1617 Շահ-Աբաս Ա.-ը աւերում է Վրաստանը և շատ վրացիներ տանում է իւր հետ Պարսկաստան։
1632 Առաջին կանոնաւոր զօրքը Ռուսաստանում։
1634 Վրաստանում Մահմեդականութեան մուտք գործելը։
1664 Արչիլը Թելաւը շինում է աթոռանիստ քաղաք։
1672 Ծնվում է Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը։
1700 Ռուսաստանում սկսվում է տարեգրութիւն (յունվարի 1-ին) Քրիստոսի ծննդից։
1701 Առաջին թատրոնը Ռուսաստանում։
1703 Առաջին լրագրի հրատարակելը Ռուսաստանում։
1705 Քաղաքական գրերի տպագրութիւնը Ռուսաստանում։
1709 Վախտանգը հիմնում է Թիֆլիզում տպարան, սկսում է գրել վրաց պատմութիւն և տպում է գրքեր։
1716 Ալանացիք Քարթլը ու Կախեթը աւերում են։
1723 Մահմադ-ղուլի խանը աւերում է Թիֆլիզը և կողոպտում է Սիօնի եկեղեցին։
1724 Վախտանգը տանում է իւր հետ Ռուսաստան Պետրոս Մեծի հրաւէրով 5 եպիսկոպոս, 6 վարդապետ, 5 սարկաւագ և 140 աշխարհական։
1725 Մեծն Պետրոս կայսրը մեռնում է։
1743 Մահուան պատիժը ոչնչանում է։
1752 Թէմուրազ թագաւորը հալածում է պարսիկներին Երեւանից և նրա բնակիչներին բնակեցնում է այժմեան Հաւլաբար թաղում։
1754 Առաջին բանկի հիմնելը Ռուսաստանում։
1755 Մոսկվայում առաջին համալսարանի բացումը։
1767 Ծաղկի պատուաստելը մտցնվում է Ռուսաստան։
1768 Թուղթ փողի գործադրութիւնը Ռուսաստանում։
1769 Հերակլէն, Գօրի, Սղնախ, Թելաւ, Բօրժօմ և ուրիշ տեղեր բերդ է շինում, հիմնում է տպարան, զինարան, թնդանօթ է ձուլում, կտրում է դրամ, և գրքեր է տպում։
1788 Անտօն Ա. թարգմանիչ և լեզուագէտ կաթողիկոսը վախճանվում է։

1785 Կովկասի փոխարքայութեան հիմնելը:
1786 Պետական բանկի հիմնելը:
1795 Աղա-Մահմադ խանը յարձակվում է Թիֆլիսի վերայ և աւերում:
1799 Վրաց Գէորգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին:
1801 Վրաց և ռուսաց մէջ 10 յօդուածից բաղկացած դաշնագրի ստորագրելը:
1802 Ռուսաստանում Մինիստերստվան սկսվում է:
1804 Մինգրելիան և Իմերէթը միանում են Ռուսաստանի հետ:
1809 Ֆինլանդիան միանում է Ռուսաստանի հետ:
1814 Ռուսները առնում են Փարիզը:
1815 Լեհաց Թագաւորութեան միացումը Ռուսիայի հետ և Վիէննայի դեսպանաժողովը:
1830 Առաջին և մեծ խօլերան Ռուսաստանում:
1837 Պուշկինը մեռնում է:
1841 Լերմոնտովի մահը:
1844 Կռիլովի մահը:
1844 Վարանցովի փոխարքայ նշանակուելը:
1859 Կովկասեան 69-ամեայ պատերազմների վերջանալը և Շամիլի գերի առնելը:
1861 Ստրկութեան ոչնչանալը:
1864 Կովկասի վերջնականապէս նուաճումը:
1866 Մեծ իշխ. Միխայել Նիկ. փոխարքայ նշանակուելը.
1877 Ռուս-Տաճկաստանի պատերազմը: Նեկրասովի մահը:
1878 Սան-Ստեփանոյի դաշնադրութեան ստորագրելը:
1882 Վրաց վերջին շառաւեղը-Հայազգի Մարիամ Թագուհին մեռնում է և Թաղվում Թիֆլիզի Հայոց Վանքի եկեղեցւոյ հիւսիսային կողմը պատի տակ:
1883 Տուրգենևը մեռնում է:
1887 Կովկասում մոցնվում է առաջին անգամ զինուորագրութիւնը:
1888 Կայսր Աղեքսանդր III-ը այցելում է Կովկասը Կայսերուհւոյ և Թագաժառանգի հետ:
1889 Պարսից Շահ-Նասրէդդինը անցնում է Կովկասի վրայով Ռուսաստան և արտասահման:
1890 Իտալիոյի Թագաժառանգ Վիկտոր-Էմմանուէլը այցելում է Կովկասը:

---

## 3) Հայոց պատմութեան

Նշանաւոր անցքերը

Քրիստոսից առաջ:

2492 Հայազգայնութեան սկզբնաւորութիւնը.
2346 Հայոց տէրութիւնը սկսվում է: Հայոց թագաւորութեան սկիզբը Պարուրից:
149 Սկսվում է Արշակունեաց Թագաւորութիւնը Վաղարշակից:

Քրիստոսից յետոյ:

30 Աբգար Հայոց Թագաւորը նամակ է ուղարկում Քրիստոսին:
34 Թադէոս Առաքեալը ս. Գեղարդը տանում է Հայաստան և մկրտում է Աբգարին և ժողովրդեան շատերին:
50 Թադէոս Առաքեալը նահատակւում է:
51 Եղիշէ անունով Թադէոսի աշակերտը նահատակվում է Արցախ գաւառում (այժմ Քիշ գիւղում),
60 Թադէոսի աշակերտ Սանդխտոյ Սինեաց գաւառում նահատակվում է (Տաթևու վանքը):



62 Բարդուղիմէոս Առաքեալը նահատակվում է Աղբակում:
79 Երևան քաղաքի հիմնարկութիւնը:
197 Վաղարշը հիմնում է Վաղարշապատը:
253 Խոսրով Թագաւորը հիմնում է Գաւրէժ քաղաքը (Թաւրիզ):
257 Գրիգոր Լուսաւորչի ծնունդը:
303 Ս. Գրիգորը ձեռնարկում է Էջմիածնի շինութիւնը:
Արիստակէս Հայրապետը վերադառնում է Նիկիոյ Ս. ժողովից՝ բերելով իր հետ հաւատոյ հանգանակը:
Գրիգորիսը Աղուանից կաթողիկոս է կարգւում:
406 Մեսրոբը գտնում է մեր այբուբենը:
Արշակունեաց Թագաւորութիւնը վերջանում է:
451 Վարդանանց պատերազմը:
452 Կաթողիկոսական Աթոռի փոխադրումը Էջմիածնից Դուին:
458 Վարդանայ դուստր Շուշանիկը նահատակվում և Թաղվում է Թիֆլիզում (Մետեխի բերդում):
539 Եդեսիայում յայտնվում է Աբգարին ուղարկած Քրիստոսի դաստառակը:
551 Մովսէս կաթողիկոսի հրամանով Աթանաս Տարօնացին յօրինում է եկեղեցական տօմարը:
653 Կարգւում է Վարագայ-Խաչի տօնը:
706 Արաբացի Կոզմը Նախիջևանի եկեղեցում 800 հայ իշխաններ կրակով նահատակում է:
924 Կաթողիկոսական Աթոռը Դուինից Վասպուրական է փոխադրվում:
961 Անին դառնում է Բագրատունեաց մայրաքաղաք: Սկիզբը Բագրատունեաց Թագաւորութեան:
968 Խոսրովանոյշը հիմնում է Սանահնոյ և Հաղպատայ վանքերը:
993 Կաթողիկոսական Աթոռը Վասպուրականից Անի է փոխադրվում:
Բագրատունեաց Թագաւորութիւնը վերջանում է:
1080 Նորոգվում է Հայոց Թագաւորութիւնը Կիլիկիայում:
1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխվում է Անիից Հռոմկլայ— Կիլիկեայ:
1294 Կաթողիկոսական Աթոռը փոխադրվում է Սիս:
1311 Երուսաղէմում սկսվում է մեր ազգի պատրիարքութիւնը:
1323 Անի քաղաքի կործանումը:
1393 Մեր ազգի Թագաւորութեան վերջանալը:
1441 Կաթողիկոսական Աթոռը վերջնականապէս փոխադրվում է Ս. Էջմիածին:
1461 Կ. Պօլսի պատրիարքութեան սկիզբը:
1513 Երևանը գրավում են Տաճիկները:
1567 Վենետիկում տպագրվում է առաջին հայերէն Սաղմոսը:
1603 Շահ-Աբաս պարսից Թագաւորը հայերին գերի է տանում Պարսկաստան:
1785 Սիմէօնը Կաթողիկոս Էջմիածնում հիմնում է տպարան:
5781 Նոր-Նախիջևանի հիմնելը:
1789 Շուշուայ ամրոցի հիմնելը:
1798 Ղարաբաղից 1100 ընտանիք գաղթում են դէպի Ղզլարու կողմերը:
1799 Առաջին պարբերական հրատարակութիւնը Վենետիկում «Տարեգրութիւն» անունով:
1813 Մոսկվայի Լազարեան Ճեմարանի բացումը:
1823 Հայր Միքայէլ Չամչեան վարդապետը (պատմագ.) վախճանվում է:
1825 Ներսէս Ե աշտարակեցի կաթողիկոսը հիմնում է Ներսեսեան դպրոցը:

1828 40 հազար հայեր գաղթում են Ռուսաստան։
1837 Հաստատվում է Սուրբ Էջմիածնի Սինհոդոսը։
1857 Ներսէս Ե կաթողիկոսը վախճանվում է (փետրվարի 14-ին)։
1858 Խալիբեան ուսումնարանի բացումը։
1850 Հայոց առաջին թատրոնը Թիֆլիզում։
1860 Հաստատվում է Տաճկահայոց սահմանադրութիւնը։
1858 «Մեղու Հայաստանի» լրագրի հրատարակութիւնը։
1863 Բագուի Մարդասիրական ընկերութիւնը հիմնվում է։
Միքայէլ Նալբանդեանցը վախճանվում է։
1868 «Արարատ» ամսագիրը հրատարակվում է Ս. Էջմիածնում։
1869 Թիֆլիզում բացւում է առաջին անգամ Գայեանեան Հայ օրիորդաց միջնակարգ դպրոցը։
1872 «Մշակ» լրագիրը հրատարակվում է։
1873 Ս. Էջմիածնում բացվում է Գէորգեան Ճեմարանը։
«Փորձ» ամսագ. հրատարակվում է։
1877 Մարկամեան—Յովնանեան օրիոր. դական դպր. բացումը Թիֆլիզում։
1878 Ռուսները տիրում են Էրզրումին։ (Կարին)։ Բերլինի վեհաժողովում ստորագրում են Հայոց խնքնավարութեան 61-րդ յօդուածը։
1879 Վերադառնում են Հայաստանեաց եկեղեցու ծոցը 35 ընտանիք հռովմէական հայք, Մաղաքեայ Օրմանեան վարդապետի առաջնորդութեամբ։
Ստեփ. Նազարեանցը վախճ.։
1881 Թիֆլիզում հիմնւում է Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը։
«Արձագանք» շաբաթ. հրատարակվում է։
Վախճան. Գաբ. եպ. Այվազովսկի։
1882 Թիֆլիզում կայանում է Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը։
«Մեղու Հայաստանի» 25-ամեայ
1884 «Նոր-Դար» ամենօրեայ թերթը հրատարակւում է։
յօբելեան կատարելը։
1885 Մակար Ա. Կաթողիկոսը օծվում է հոկտեմբերի 10-ին։
1887 Անդրկովկասում մոցնվում է հայերի մէջ ևս զինուորագրութիւնը։
1888 Մակար Ա. Կաթողիկոսը ընդունվում է Թիֆլիզում Կայսեր Աղէքսանդր Ա.-ից, և նոյն թւի հոկտեմբեր ամսում Կաթողիկոսը այցելում է Բագու քաղաքին։
1888 Յայտնի վիպասան Րաֆֆին վախճանվում է։
1889 Պարսից Շահ - Նասրէդինը, Փարիզի աշխարհահանդէսից վերադառնալիս այցելում է Ս. Էջմիածինը։
1889 Էջմիածնում վախճանվում է յայտնի մատենագիր և ուսուցչապետ Ստեփ. Պալասանեանցը։
1889 Արեւելեան լեզուաց պրօֆ. և յայտնի հնագէտ Քերովբէ Պատկանեանը վախճանվում է։
«Մուրճ» ամսագիրը հրատարակւում է։
1890 Իտալացւոց թագաժառանգը այցելում է Ս. Էջմիածինը, և փառաւոր կերպիւ ընդունվում Հայոց Կաթողիկոսից։
Հայր Ղեւոնդ Ալիշանի յիսնամեա յօբելեանը կատարելը։



ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Երկրագնդի բնակիչների թիւը։

| | | |
|---|---|---|
| Եւրոպայում . . . . . | 363 | միլիոն |
| Ասիայում. . . . . . | 840 | » |
| Աֆրիկայում . . . . . | 205 | » |
| Ամերիկայում. . . . . | 100 | » |
| Աւստրիայում և բեւեռային երկրներում. . . . . | 5 | » |

Ընդամենը մօտ. 1513 միլիոն։

Սոքա ամենքը խօսում են 3600 լեզուով և ունին 1000 դաւանութիւն (կրօն)։ Քրիստոնեաները մօտ 427 միլիոն են մահմեդականները 180 մ. հրեաները 8 մ. մնացած 900 միլիոնի մեծ մասը կռապաշտներ են։

Ամեն տարի ծնվում են ամբողջ երկրագնդի վերայ 38 միլիոնից աւելի։ Մեռնում են 35 միլիոնից աւելի մարդ։ Ծնուածների չորրորդ մասը մեռնում է մինչև 7 տարեկան հասակը։ Կէսը մինչև 17 տարին. 100 տարուան հասնում է 1000 մեռնողներից մէկը։ Մարդկային հասակի տարուայ միջին թիւը 33 է։ Տղամարդկանց թիւը մօտաւորապէս հաւասար է կանանց թւին։ Կանայք աւելի երկար են ապրում քան տղամարդիք։ Կարճահասակ մարդիկ աւելի են ապրում քան բարձրահասակները։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

Ռուսաց կայսրութիւնը տարածվում է 19,615:142 քառակուսի մղոն կամ 406,600 քառակուսի մղ, որը կազմում է ամբողջ երկրագնդի $1/8$ մասը։ Բնակիչները 103:356,373 (Անդրկովկասում 6,534,553, Սիբերիայում 9,066,669, Լեհաստանում 7,083,975, Ֆինլանդիայում 2,060,782, Եւրոպական Ռուսաստանում 78,590,594). ընդամենը 103,326,373 հոգի, են որոնցից 51,454,538 այր և 51.901,835 կին մարդ։ Ծնւում են ամեն տարի մօտաւորապէս 3,500,000 մեռնում են 3,400,00, պակւում են մին. 720,000։ Դաւանութեամբ յունադաւան 81,204,736։ Աղանդաւորները պաշտօնական տեղեկութիւններից 2,171,006։ Ռւնիթուներ 226,486։ Հայադաւաններ 1.278,560։ Կաթոլիկներ 2,428,568։ Կռապաշտներ 2,163,899։

Նահանգական քաղաքներ, (մայրաքաղաքներն էլ հաշուած) 97 են, գաւառական քաղաքներ 130, Զաշտանի քաղ. 470, գիւղեր և աւաններ մօտաւորապէս 550,000, վարելահողեր մօտաւորապէ 1 միլիօն դես. Փաբրիկաներ և զանազան գործարաններ մօտ 36,200, որի մէջ բանում են մօտ մէկ միլիօն մշակ բանուորներ։ Տօնավաճառները 7,000,450 միլիօնի հասնող շրջանառութեամբ (оборотомъ)։ Երկաթուղիներ 35,000 մղոն, որի ընդհանուր մուտքը մօտ 214,000,000 է։ Հեռագրի թելի երկարութիւնը ձգւում է մօտ 900 մղոն երկարութեամբ։ Ուսումնարանական հաստատութիւններ 39,194 2,440,000, ուսանողներով (1,691,000 այր և 600,000 կին)։ Համալսարանների թիւը 9-ն է, 12,415 ուսանողներով։ Միջին կարգի ուսումնարաններ 563 տղայոց և 471 օրիորդաց։ Տէրութեան ծառայութեան մէջ հաշվում են 14,000 բժիշկներ, ամեն մի 10,000 բնակչի վերայ գալիս է մէկ բժիշկ։ Դեղատուն կայ 1780 հատ։

Տէրութեան մէջ տարեկան ապրանաց ամեն տարի մուտքը 605,000,000 րուբլի է։ Ելքը 603 միլիօն։ Ռուսաստանի բնակիչներից պատուաւոր ազնուական 644,469, ազնուական և ծառայող 359,809 հոգևորական 614,337, գիւղական դասակարգ, 92,264,354 հոգի, զինուորական 4,094,:546

### ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ

| | |
|---|---|
| 1) Տաճկա.(Հայաստանում.) | 1,768,000 |
| » (Եւրոպական-տաճ.) | 287,000 |
| » Միջագետքում | 12,000 |
| » Կիլիկիայում | 244,000 |
| » Եգիպտոսում | 8,900 |
| » Մնացեալ Փոքր-Ասիայում | 686,000 |
| 2) Ռուսաստանում Եւրոպական (և Սիբիրիայում) | 175,000 |
| » Անդր-Կովկասում | 1,280,000 |
| 3) Պարսկաստանում մօտ | 164,000 |
| 4) Հնդկաս. և Ասիայում | 38,000 |
| 5) Ռումինիայ և Բուլգարիայ | 9,500 |
| 6) Հունգարիայ և այլ Եւրոպական երկրներում | 7,900 |
| 7) Ամերիկայ (Հարաւային և հիւսիսային) | 5,850 |
| 8) Երկրագնդի այլ և այլ մասերում՝ մօտ | 8,000 |
| | 4,733,100 |

Պօլսում հայերի թիւը մօտ 200—240,000 է հասնում:

Թիֆլիսում . . . . . . . . 45— 50,000

Իսկ 1870 թւի ժողովրդագրութեամբ, պանդուխտների թիւը, Կ. Պօլսում հասնում էր . . . . . . . . 50,000

Թիֆլիսում և Բաթումում. 10,000

## VI. ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Կայսր ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ III. ծն. 26 փետրվ. 1845 թ. գահակալու թւին 1-ին Մարտի 1881 թ.

Կայսերուհի Մարիայ Ֆէօդօրօվնա. ծն. 14 Նոյեմբ. 1847 թ.

1). Թագաժառանգ Նիկոլայ Աղեքսանդրովիչ ծն. 6 մայիսի. 1868 թ.: 2) Մեծ իշխան Գէօրգի Աղեքսանդրովիչ: 3) Միխայել Աղեքսանդրովիչ. 4) Կսենեայ Ալեքս.: 5) Օլգա Ալեքսանդրովնա:

Մեծ իշխանք 1) Կոստանդին Նիկոլայեվիչ 2) Նիկոլայ Նիկոլայեվիչ 3) Միխայել Նիկոլայեվիչ:

### ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կայսերական տան Նախարար Իլլար. Իվ. Վօրօնցով-Դաշկով:
2. Արտաքին գործոց » Նիկ. Կար. Գիրս:
3. Զինուորական » Պետ. Սիմ. Վաննովսկի:
4. Ծովային » Մեծ իշխ. Ալեքսէյ Ալեքսանդրովիչ:
5. Ներքին գործոց » Իվան. Նիկ. Դուրնօվօ:
6. Ազգային լուսաւորութեան գրաֆ Իվ. Դաւ. Դելեանով:
7. Ֆինանսական » Իվ. Ալ. Վիշնեգրադսկի:
8. Պետական կալուածների » Միխ. Նիկ. Օստրովսկի:
9. Արդարադատութեան » Նիկ. Ավգ. Մանասէյն:
10. Ճանապարհների հաղորդակցութեան՝ Ֆօն-Գիւբբէնէտ:

Պետական վերահսկող. Պետական հսկող Իվ. Մարտ. Սօլսկի:



## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐԸ

1 Արխանգելսկի իշխ. Դ. Դմ. Գալիցին
2 Հաշտարխանի իշխ. Լ. Դ. Վեազեմսկի
3 Բագուի Վ. Պետր. Ռօգգէ
4 Բէսարար. Ա. Պ. Կոնստանտինովիչ
5 Վարշաւայի Ն. Ն. Մէդէմ
6 Վիլնօի Ն. Ա. Գրիվէնեց
7 Վիտէբսկի իշխ. Վ. Մ. Դոլգորուկով
8 Վլադիմիրսկու Իօ. Մ. Սուդիէնկօ
9 Վօլգօդի Մ. Ն. Կորմիլիցին
10 Վօլինի Ե. Օ. Եանկովսկի
11 Վարօնէժի Ա. Վ. Բօգդանովիչ
12 Վեատսկի Ա. Ֆ. Անիսին
13 Գրօդնէնի Ա. Ն. Պոսէմկին
14 Եկատերինոսլավի. Դ. Ն. Բատիւշկով
15 Եփսու. (Դանձ.) իշ. Ա. Դ. Նակաշիձէ
16 Ենիսէի Ի. Կ. Պէդաշէնկօ
17 Իրկուտսկի Կ. Ն. Սվետլիցկի
18 Ղազանի Պ. Ա. Պօլտօրացկի
19 Կալուժի Ա. Գ. Բուլիգին
20 Կալուգի Մ. Պ. Դարագան
21 Կեւլի Լ. Պ. Տօմարա
22 Կօվէնի Ե. Ա. Կուրովսկի
23 Կաստրօմայի Վ. Վ. Կալաչով
24 Կուրլանդիայի Դ. Ս. Սիպեագին
25 Կուրսկի Վ. Վ. Ֆօն-Վալ
26 Կէլցէի Ն. Ֆ. Իվանէնկօ
27 Լիֆլեանդիայի Մ. Ա. Զինովիեվ
28 Լօմժինի Լէյտ. Վ. Եսսէն
29 Լիւբլինի իշխ. Վ. Ֆ. Տխօրժեվսկի
30 Մինսկի իշխ. Ն. Ն. Տրուբեցկի
31 Մագիլեւի Ա. Ս. Դէմբօվեցկի
32 Մոսկվայի իշխ. Վ. Ս. Գօլիցին
33 Նիժէգորոդի Ն. Մ. Բարանով
34 Նովգորոդի Ա. Ն. Մօսօլով
35 Օլօնէցի Գ. Գ. Գրիգորիեվ
36 Օրէնբուրգի Ն. Ա. Մայլակովեց
37 Օրլօվի Ա. Ի. Ցեդլովսկի
38 Պէնզայի Ա. Ն. Վօլկով
39 Պէրմի Վ. Վ. Լուկօշկով
40 Պետրակովի Ա. Վ. Կամարով
41 Պլօցի Կ Կ. Միլլեր
42 Պադօլսկի Վ. Մ. Գլինկա
43 Պօլտաւայի Պ. Պ. Կոստագովսկի
44 Պսկովի Կ. Ի. Պաշչէնկօ
45 Ռադոմի Մ. Ա. Մայլէվսկի
46 Ռեազանի Գ. Պ. Կլադիշչեվ
47 Սամարայի Ա. Դ. Սվերբեեվ
48 Ս. Պետերբուրգի Ի. Վ. Լուտկովսկի
49 Սարատովի Ա. Ի. Կոսիչ
50 Սիմբիրսկի Մ. Ն. Տէրէնին
51 Սմոլէնսկի Վ. Օ. Սօսնովսկի
52 Ստաւրօպոլի Ն. Ե. Նիկիֆօրսկի
53 Սուվալկի Լ. Ա. Ստամբեգով
54 Սեդլէցի Ե. Մ. Սուբոտկին
55 Տավրիկեան Ա. Ն. Վսէվօլօժսկի
56 Տամբօվի Ա. Ա. Ֆրեդերիկս
57 Տվէրի Ա. Ն. Սօմով
58 Տփխիսի իշ. Գ. Դմ. Շէրվաշիձէ (պաշտ.)
59 Տաբօլսկի Վ. Ա. Տրոյնիցկի
60 Տօմսկի Ա. Պ. Բիլլիւբաշ
61 Տուլայի Ն. Ա. Զինովիեվ
62 Ուֆայի Լ. Ե. Նօրդ
63 Խարկովի Ա. Ի. Պետրով
64 Խէրսոնի Ա. Ս. Էրդէլի
65 Չեռնիգովի Ա. Կ. Անաստասիեվ
66 Երևանի Ֆրէզէ:
67 Էստլանդիայի իշխ. Ս. Վ. Շախովսկի
68 Եակուտսկի Վ. Զ. Կօլէնկօ
69 Եարօսլաւի Ա. Ե. Ֆրիդէ
70 Քութայիսի Մ. Ե. Շալիկով
71 Ղուբանի —
72 Թերեքի —

## VIII ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ։

I. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Նախամեծար Աթոռոյ։ Ամենասրբազնագոյն Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց (Թափուր)։

### ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ։

I. ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ։ Մկրտիչ Կաթողիկոս, ընտրեալ ի մայիսի 1871 ամի։

II. ԱՂԹԱՄԱՐԱՅ։ Խաչատուր Կաթողիկոս։

### ՊԱՏՐԻԱՐԳՆԵՐ։

I. ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ։ Յարութիւն արքեպ. Վեհապետեան։

II. Կ. ՊՕԼՍՈՅ։ Խորէն արքեպ. Աշըգեան։

### Ս. Էջմիածնի Սինոդոս.

Տեղակալ Ատենապետի Սինօդի Երեմիա եպիսկ. Գալստեան (լուսարարապ.)։
Անդամք Սինօդի Սուքիաս եպ. Պարզեան.
« » Ներսէս եպիսկ. Խուդավերդեանց
« » Սարգիս եպիսկ. Տէր-Գասպարեան։
« » Արիստակէս եպիսկոպ. Դաւթեան։
Պրօկուրօր Խրիստ. Խրիս. Կանչելի։
Ատենադպ. Սիմէօն Փիլիպոսեանց։ Թարգման Կաթողիկ. Ռուբէն Մելիք-Ադամեանց։ Նախագահ տպարանական ժողովոյ Ս. Էջմիածնի Արիստակէս եպ. Դաւթեան։

---

### ԹԵՄԵՐԸ

I. ԵՐԵՒԱՆԻ։ Փոխանորդ Թեմ. Առաջ. Գրիգոր եպ. Գառնակերեանց։

Տաթեւի։ Յաջորդ Անանեայ վարդապ. Համազասպեան.

Հին-Նախիջեւանի՝ յաջորդ՝ Գրիգորիս վրդ. Տ. Յակոբեան։

Աղէքսանդրօպօլու՝ յաջորդ Գարեգ. Սաթունեանց։

II. ՂԱՐԱԲԱՂԻ Թեմական առաջն. Կարապետ եպիսկ. Այվազեանց։

Նուխու՝ յաջորդ՝ Վահան վ. Տէր-Գրիգորեանց։

III. ՀԱՇՏԱՐԽԱՆԻ։ Թեմակ. առաջն. Գէորգ եպ. Սուքիասեանց։

Ղզլարի՝ Անդամք. Իսահակ քհյ. Պապովեանց. Խորէն քհյ. Ղորղանեանց։

IV. ՇԱՄԱԽԻ։ Թեմական առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատեանց։

V. ԲԵՍԱՐԱԲԻՈՅ Թեմ. առ. —

Պետերբուրգի՝ Հ. Կ. Նախանդ. Գէորգ ա. քհյ. Խանթարջեանց։

Մօսկվայի՝ Յարութիւն ա. քհյ. Ղուկասեանց։

Գրիգորիօպօլու՝ Յարութիւն քհյ. Պապովեանց։

Նոր-Նախիջեւանի՝ Համազասպ վրդ. Համազասպեան։

VI ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ Թեմական առաջնորդ Մամբրէ եպիսկոպոս Սանասարեանց։

Գանձակու՝ յաջ. Գրիգորիս եպիսկոպ. Աղուանեանց։

Ախալցխայի՝ յաջորդ Յովհաննէս վարդ. Շիրակունի։

Փօրու՝ Անդ. Հ. Կ. Յակոբ քհյ. Ղուկասեանց։

### Պարսկաստանի եւ Հնդկաստանի

I. Ատրպատականի՝ Թեմ. առաջնորդ Ստեփաննոս եպ. Մխիթարեանց։

II. Իսպահանի (Նոր-Ջուղայի) և Հնդկաստանի Թեմ. Առաջ. Եսայի եպ. Տէր-Աստուածատրեան։

Առաջնորդական փոխ. Նոր-Ջուղայի Խաչատուր վարդ. Կարապետեանց։
Կալկաթայի՝ Մին. ա. ք. Բարսեղեան։
Մադրասի՝ Եղիշէ ք. Մկրտումեան։
Լօնդօնի։ — (պարապ)
Մանչեստրի՝ Սուքիաս վ. Պարոնեան։
Սինգապուր՝ Սեզբեստ. ք. Յովհաննիսեան
Բատաւիա՝ Դեոնեսիոս ք. Տ.-Եղիազարեան



ՍԱՐԳԻՍ-ՓԱՇԱ ՊԱԼԵԱՆ

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ — ՀԱՐԿԵՐ

*Վկայականներ առուտուրի և արդիւնաբերութեան իրաւունքների*

| | | | |
|---|---|---|---|
| 1 կարգի գիլդի ամէն տեղ | | | 565 ր. |
| 2 " | 1 | " . . | 120 " |
| | 2 | " . . | 95 " |
| | 3 | " . . | 75 " |
| | 4 | " . . | 55 " |
| | և 5 | " . . | 10 " |

*Վկայականներ մանրածախողի — հարկ.*

| | |
|---|---|
| 1 կլաս . . . . | 30 ր. |
| 2 " . . . . . | 25 " |
| 3 " . . . . . | 20 " |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | " . . . . . | 15 " | |
| և 5 | " . . . . . | 10 " | |
| | վկայական | 16 " | 6 ր. |

*Գործակատարի վկայականներ.*

| | |
|---|---|
| 1 կարգի համար. . . . | 35 ր. |
| 2 " . . . . . . . . . | 6 " |

*Ճանապարհորդ առևտրի վկայականներ.*

| | |
|---|---|
| 1 գիլդի. . . . . . . . . | 15 ր. |
| 2 " . . . . . . . . . | 6 " |

*Արդիւնագործական գործարանների.*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 գիլդի վկայակ. | I կարգի | 55 ր. | | IV | " | 15 " |
| | II " | 45 " | | և V | " | 10 " |
| | III " | 35 " | Մանրածախողի | I | " | 10 " |
| | IV " | 25 " | | II | " | 8 " |
| | և V " | 20 " | | III | " | 6 " |
| 2 գիլդի " | I " | 35 " | | IV | " | 4 " |
| | II " | 25 " | | և V | " | 2 " |
| | III " | 20 " | | | | |

## ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ
(ՏՕՆԱՎԱՃԱՌՆԵՐ)

*Այստեղ յիշուած են միայն այն տօնավաճառները, որոնք շարունակւում են երեք-չորս շաբաթ, կամ որոնց առուտուրի մեծութիւնը* (оборотъ) *միլլիոնից աւելի է լինում։*

ՅՈՒՆՎԱՐ

| | | | |
|---|---|---|---|
| 1. Вологда | 6-ից յունվարի | 1 փետրվարի | 1 |
| 2. Դորպատ | 7 ից » | 28 յունվարի | |
| 3. Դուբնո | 6-ից » | 6 փետրվարի | |
| 4. Կիև | 15-ից » | 10 » | |
| 5. Օրել | 6-ից » | 20 յունվարի | |
| 6. Խարկով | 26-ից » | 26 » | |



ՓԵՏՐՎԱՐ և ՄԱՐՏ

1. Իրբիտ (պերմ) 1 փետրվ. մինչև 1 մարտի
2. Ռօստով մեծ պասի առ. չորեքշ. մինչև երրորդ չորեքշաբթի

ԱՊՐԻԼ

1. Վիլնօ 23 ապրիլի մինչև 15 մայիսի

ՄԱՅԻՍ

1. Կուրսկ 9-երրորդ ուրբաթ Զատկից յետոյ
2. Սարատով 9 մայիսից մինչև 4 յունիսի
3. Խարկով, Հոգեգալստեան օրը։
4. Բաքու, մայիսի 6-ից մինչև 1 յունիսի

ՅՈՒՆԻՍ

| | | |
|---|---|---|
| 1. Եկատերինօսլաւ | 19-ից յունվարի | 3 յուլիսի |
| 2. Կիև | 16-ից » | 1 » |
| 3. Ռիգայ | 20-ից » | 20 » |

4. Տամբով զատկից տասը շաբաթ յետոյ։

ՅՈՒԼԻՍ

| | | |
|---|---|---|
| 1. Մակարիայ | 15-ից յուլիսի | 5 սեպտեմբ. |
| 2. Պոլտավա | 10-ից » | 10 օգոստոսի |
| 3. Յակուտսկ | 10-ից » | 10 » |

ՕԳՈՍՏՈՍ

| | | |
|---|---|---|
| 1. Խարկով | 7-ից օգոստ. | 27 օգոստոսի |
| 2. Շչեդրինսկի | 20-ից » | 15 սեպտեմբ. |

ՍԵՊՏԵՄԲԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. Արխանգելսկի | 1-ից սեպտեմբ. | 1 հոկտեմբ. |
| 2. Օրեօլ | 8-ից » | 6 » |
| 3. Ռոստով | 8-ից » | 6 » |
| 4. Սամարա | 14-ից սեպտեմբ. | 25 հոկտեմբ. |
| 5. Խարկով | 21-ից » | 15 » |

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. Եկատերինօդար (Կովկասի) 16 հոկտեմբերի։

| | | |
|---|---|---|
| 2. Բիչինե | 16-ից հոկտեմբ. | 26 հոկտեմբ. |
| 3. Սարատով | 22-ից » | 24 նոյեմբ. |

ՆՈՅԵՄԲԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. Կոզնեցկի | 8-ից նոյեմբերի | 30 նոյեմբերի |

ԴԵԿՏԵՄԲԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. Իլիմ | 6-ից դեկտեմբերի | 1 յունվ. |
| 2. Կիբերիայ | 6-ից » | 6 » |

## ՄՈՒՐՀԱԿ

Մուրհակով պարտաւորուել չեն կարող 1) հոգևոր կոչումի անձինք ամեն դաւանութեան. 2) անշարժ կալուածք չունեցող գիւղացիք, եթէ առևտրական վկայական չունին վերցրած. 3) զինուորական ամեն դասակարգի ստորին աստիճանի անձինք, որոնք գտնւում են զինուորական իսկական ծառայութեան մէջ, 4) Պսակուած կանայք և օրիորդներ, որոնք ծնողներից չեն բաժանուած, թէպէտև լինին չափահաս, իրաւունք չունին մուրհակագրով պարտաւորուել. սակայն եթէ կինը առևտրական հաստատութիւն կամ գործ ունի իւր անունով, նա կարող է առանց մարդու համաձայնութեան մուրհակագիր տալ։ Վերը յիշուած անձերից որ և է մէկի տուած մուրհակները՝ չեն ընդունւում իբրև մուրհակ, բայց դատարանի նկատողութեամբ կարող են պարտաւորագրի նշանակութիւն ունենալ։ Այն անչափահասը, որ մուրհակը տալիս իրան չափահաս է անուանում, պարտքը վճարելուց չէ ազատւում։ Ցառաջարկ տրուած մուրհակները պէտք է առաջարկուին վճարման համար՝ 12 ամսուան ընթացքում գրելու օրուանից։ Պայմանաժամին անցնում է.—այս ինչ թուից այսքան օրով կամ ամսով գրած մուրհակների համար—վերջին օրը անցնելուց յետոյ, այն մուրհակների համար, որոնց վճարումը նշանակուած է տօնավաճառում—տօնավաճառի վերջանալու համար որոշուած օրուայ նախընթաց օրը, կամ նոյն իսկ տօնավաճառի փակուելու օրը, եթէ դա միայն մի օր է տևում. այն մուրհակների համար, որոնց վճարումը սովորական պայմանաժամով է լինում—ստացման ծանուցումից 15 օր անց է։ Թոյլ է տրուած այսպէս ասած երկարաձգումը—(բողոքից) երեք օր այն մուրհակների համար, որոնք տրուած են ցպահանջ, և 10 օր—այնպիսիների համար, որոնք որոշեալ պայմանաժամով են տրուած։ Եթէ վճարման պայմանաժամը կամ վերջին օրը տօն կամ ոչ—ատենական օր է գալիս, կամ հրէից համար շաբաթ օրը՝ այդ դէպքում նա յետաձգւում է, բայց միայն մինչև միւս օրը։ Վճարել չը կարողանալու դէպքում ստորագրողը այդ մասին ցուցանում է և նրան տրւում է միօրեայ միջոց ցուցանելուց յետոյ։ Չը վճարուած մուրհակը պէտք է նօտարին ներկայացնել բողոքելու։

Մուրհակը իւր ոյժը կորցնում է հետևեալ դէպքերում 1) եթէ ցպահանջ մուրհակը չը բողոքուի մի տարուայ ընթացքում, հաշուելով մուրհակի թուի հետևեալ օրուանից. 2) պայմանաժամով կամ նոյնպէս ցպահանջ մուրհակը, երբ բողոքելուց յետ երկու տարուայ ընթացքում չառաջարկուի վճարման համար։ Երկու դէպքումն էլ մուրհակը պահպանում է իւր նշանակութիւնը որպէս հասարակ պարտքի պարտաւորագիր տասն տարուայ ընթացքում։

---



## ՀԱՍԱՐԱԿ ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿԻ ՕՐԻՆԱԿ

*Թիֆլիս, 1-ին Յուլիսի 1891 Թուին*

**Մուրհակ 1000 րուբլ. արժ.**

Յուլիսի մէկից հազար ութհարիւր իննսուն ամի երկու ամիս ժամանակով, այս իմ պարտամուրհակովս պարտաւորւում եմ ես վճարելու Թիֆլիզի 2-րդ կարգի վաճառական Յովհաննէս Մաթոսեան Կիրակոսեանին կամ որին որ նա կը հրամայէ հազար րուբլի արծաթ, որը ես նրանից ապրանքով (կամ զուտ փողով) լիովին ստացել եմ։

Ստորագրութիւն

## ԴՐՈՒԱԳԱՒՈՐ ԹՂԹԵՐԻ ՀԱՐԿԸ

*Մուրհակների*

| ակտերի գումարը. | | | թերթի գինը | ակտերի գումարը | | | թերթի գինը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 50 ր. | 10 | 2000-ից | մինչև | 3200 ր. | 3,70 |
| 50-ից | մինչև | 100 „ | 15 | 3200 | „ | 4000 „ | 5,15 |
| 100 | „ | 200 „ | 30 | 4000 | „ | 6400 „ | 6,80 |
| 200 | „ | 300 „ | 40 | 6400 | „ | 8000 „ | 9— |
| 300 | „ | 400 „ | 55 | 8000 | „ | 10000 „ | 11,40 |
| 400 | „ | 500 „ | 70 | 10000 | „ | 12000 . | 13,80 |
| 500 | „ | 600 „ | 80 | 12000 | „ | 15000 „ | 15,60 |
| 600 | „ | 700 „ | 90 | 15000 | „ | 20000 „ | 21— |
| 700 | „ | 800 „ | 1— | 20000 | „ | 25000 „ | 37,60 |
| 800 | „ | 900 „ | 1,15 | 25000 | „ | 30000 „ | 33,60 |
| 900 | „ | 1000 „ | 1,20 | 30000 | „ | 40000 „ | 42— |
| 1000 | „ | 1500 „ | 1,40 | 40000 | „ | 50000 „ | 54— |
| 1500 | „ | 2000 „ | 2,50 | | | | |

*Արձանագրութիւնների* (АКТОВЫЙ)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 50-ից | մինչև | 300 ր. | 1,25 | 13000-ից | մինչև | 15000 ր. | 53— |
| 300 | „ | 900 „ | 3,10 | 15000 | „ | 18000 „ | 63— |
| 900 | „ | 1500 „ | 5,40 | 18000 | „ | 21000 „ | 71— |
| 1500 | „ | 2000 „ | 7,10 | 21000 | „ | 30000 „ | 103— |
| 2000 | „ | 3000 „ | 11— | 30000 | „ | 45000 „ | 156— |
| 3000 | „ | 4500 „ | 15,65 | 45000 | „ | 60000 „ | 211— |
| 4500 | „ | 6000 „ | 20,30 | 60000 | „ | 90000 „ | 312— |
| 6000 | „ | 7500 „ | 28— | 90000 | „ | 120000 „ | 415— |
| 7500 | „ | 9000 „ | 31— | 120000 | „ | 150000 „ | 519— |
| 9000 | „ | 10000 „ | 36— | 150000 | „ | 225000 „ | 781— |
| 10000 | „ | 12000 „ | 41— | 225000 | „ | 300000 „ | 1031— |
| 12000 | „ | 13000 „ | 48— | | | | |

## ՕՏԱՐԵՐԿՐԵԱՅ ԴՐԱՄՆԵՐԻ ՋԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

(Ռուբլու, կոպէկի, ֆրանկի և սանտիմի հաշւով)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պարսից արաւին հաւասար է | ֆրան. | | 41 սանտ | — ր. | $10\frac{3}{4}$ կոպ. |
| » թուման » | ոսկի | 11 ֆ. | 86 » | 2 » | 96 » |
| » քանաքաթ » | արծաթ | 1 » | 4 » | — » | 27 » |
| » սահիբղրան » | ոսկի | 2 » | 8 » | — » | 52 » |
| Տաճկաց փարա » | ոսկի | — » | $\frac{1}{2}$ » | — » | $\frac{1}{2}$ » |
| » պիաստր » | արծաթ | — » | 22 » | — » | $5\frac{1}{2}$ » |
| » լիր » | ոսկի | 22 » | 78 » | 5 » | $69\frac{1}{2}$ » |
| Աւստրիայ դուկատ » | ոսկի | 11 » | 85 » | 2 » | $96\frac{1}{4}$ » |
| » կրեյցեր » | մետաղ | — » | 2 » | — » | —$\frac{1}{2}$ » |
| » ֆլորին » | արծաթ | 2 » | 47 » | — » | 61— » |
| Գերմանիայի պֆէնիգ. | մետաղ է | — » | 1 » | — » | —$\frac{1}{2}$ » |
| » մարկա | արծաթ և ոսկի | 1 » | 11 » | — » | $27\frac{3}{4}$ » |
| » կրոնա » | ոսկի | 12 » | 25 » | 3 » | $8\frac{3}{4}$ » |
| Անգլիայ շիլինգ » | արծաթ | 1 » | 16 » | — » | $29\frac{1}{4}$ » |
| » ֆունտ-ստերլինգ | ոսկի | 25 » | 22 » | 6 » | $30\frac{1}{2}$ » |
| » կրօնա » | արծաթ | 5 » | 81 » | 1 » | $45\frac{1}{2}$ » |
| » պեննի » | արծաթ | — » | 10 » | — » | $2\frac{1}{2}$ » |
| Ֆրանցիայ սանտիմ » | մետաղ | — » | 1 » | — » | — » |
| » ֆրանկ » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| Իտալիայ լիրա » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| » չինտէզիմօ » | արծաթ | — » | 1 » | — » | —$\frac{1}{4}$ » |
| Իսպանիայ էսկուտօ » | արծաթ | 2 » | 60 » | — » | 65— » |
| » րէալ » | արծաթ | — » | 26 » | — » | $6\frac{1}{4}$ » |
| » պեզէտա » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| » դուրօ » | ոսկի | 5 » | 19 » | 1 » | $29\frac{3}{4}$ » |
| » դուբլօն » | ոսկի | 20 » | 39 » | 5 » | $9\frac{3}{4}$ » |
| Շվէց. Նորվէնգիայ և Դան. | կրօնա | 1 » | 33 » | — » | $33\frac{1}{4}$ » |
| » » » | ոսկի | 1 » | 39 » | — » | $35\frac{3}{4}$ » |
| » » » | մետաղ | — — | 1 » | — » | $\frac{1}{4}$ » |
| Հոլանդիայ դուկատ » | ոսկի | 11 » | 83 » | 2 » | $95\frac{3}{4}$ » |
| » րիխստալէր » | արծաթ | 2 » | 25 » | 1 » | $31\frac{1}{4}$ » |
| » ֆլորին » | արծաթ | 2 » | 10 » | — » | $52\frac{1}{2}$ » |
| » ցէնտ » | մետաղ | — » | 2 » | — « | —$\frac{1}{2}$ » |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Միացեալ Նահանգ դիմ | արծաթ | — » | 50 » | — » | $12\frac{1}{2}$ » |
| » իգլ » | ոսկի | 51 » | 83 » | 12 » | $95\frac{3}{4}$ » |
| » ցէնտ » | մետաղ | — » | 5 » | — » | $1\frac{1}{4}$ » |
| Բրազիլիայ միլրէյս » | արծաթ | 2 » | 60 » | — » | 65— » |
| » » » | ոսկի | 8 » | 23 » | 1 » | $70\frac{1}{4}$ » |
| » րէիս » | մետաղ | — » | $\frac{1}{4}$ » | — » | —$\frac{1}{16}$ » |
| Հնդկաստան ռուփիա » | արծաթ | 2 » | 38 » | — » | $59\frac{1}{2}$ » |
| » մօհուր » | ոսկի | 36 » | 83 » | 9 » | $20\frac{1}{4}$ » |
| Ֆինլանդիայ մարկա » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| » պէննի » | մետաղ | — » | 1 » | — » | —$\frac{1}{4}$ » |
| Ճապօնիա իէն (վաճառականակ.) | | 5 » | 39 » | 1 » | $34\frac{3}{4}$ » |
| » սէն » | մետաղ | — » | 5 » | — » | $1\frac{1}{4}$ » |
| Ռումինիայ լէի » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| » բանի » | մետաղ | — — | 1 » | — » | —$\frac{1}{4}$ » |
| Բուլղարիայ լէվ » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| Սերբիալ լէվ » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| « փարա » | մետաղ | — » | 1 » | — » | —$\frac{1}{4}$ » |
| Յունաստան դրախմ » | արծաթ | 1 » | — » | — » | 25— » |
| » լէպտա » | մետաղ | — » | 1 » | — » | —$\frac{1}{4}$ » |
| Եգիպտոս լիվր. » | ոսկի | 25 » | 61 » | 6 » | $40\frac{1}{4}$ » |
| » պիաստր » | արծաթ | — » | 26 » | — » | $6\frac{1}{2}$ » |
| Բուխարա տինգա » | արծաթ | — » | 73 » | — » | $18\frac{1}{4}$ » |
| » տիլլա » | ոսկի | 15 » | 37 » | 3 » | $84\frac{1}{2}$ » |

Ֆրանսիայի ֆրանկը (դրամը) նաև գործ են ածում չորս տէրութեանց մէջ (Շվէյցարիայի, Բելգիայի, Լուկսէնբուրգի և Մօնակօում)։

---

## ՔԱՇԵՐ

Դեղատան քաշեր։

1 դրվանքան 84 մսխ. 12 ունց.
1 ունց 8 դրախմային
1 դրախման 3 սկրուպուլին
1 սկրուպուլն 20 գրանի
1 գրան

Զանազան երկիրներ։

Անգլիայի 1 վաճ. դրվ. 16 ունց
1 տօն (20) ցենտներ) 2240
Ռուսիայ 1 ֆունտ
1 ցենտներ
Ֆրանսիացւոց 1 գրամ
Կիլօգրամ
Չինաստանի 1 վաճ. դրվանք.
Ճապոնիայ 1 մոմէ 57 գրան
77
1 վաճառ. մոմէ 10 դրվանք.



ՆՈՒԲԱՐ-ՓԱՇԱ



## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

#### Թիֆլիսից գնում է Վլադիկավկազ՝

Ա. Հինգ հոգու տեղ ունեցող կառքը (կարէտ) առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Մլէթում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում Վլադիկաւկազ։

Բ. Վեց հոգու տեղ ունեցող (օմնիբուս) երեկոյեան ժամը 3-ին և առանց Ճանապարհին գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում Վլադիկաւկազ։

#### Վլադիկավկազից Թիֆ. գնում է՝

Ա. Հինգ հոգու տեղ ունեցող կառքը (կարէտ) առաւօտեան ժամը 9-ին և գիշերելով Մլէթ կայարանում, միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում Թիֆլիս։

Բ. Վեց հոգու տեղ ունեցող կառքը (օմնիբուս) երեկոյեան ժամը 3-ին և առանց Ճանապարհին գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

I. Միխայլովօ կայարանի. Բորժոմի, Ախալցխայի և Աբասթումանի մէջ։

Օմնիբուսները երթեւեկութեան մէջ են ամենայն օր մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն, իսկ մնացեալ ժամանակները տարուայ շաբաթը երկու անգամ, Միխայլովից երկուշաբթի և հինգշաբթի օրերը, հասնելով մինչև Ախալցխա, իսկ Ախալցխայից երեքշ. և ուրբ. օրերը։

Տեղերի գինը օմնիբուսների ներսը մինչև Բորժոմ 1 ր. 65 կ., մինչև Ախալցխայ 4 ր. 41 կ. և մինչև Աբասթուման 5 ր. 85 կ. իսկ դուրսը (накозлахъ) կէս գինը։

Ծանօթ.։ Բացի սորանից, երթեւեկում են զանազան ընկերութիւնների կառքեր, որոնցով կարելի է Ճանապարհորդել վերոյիշեալ գներից շատ պակաս։ Ընդամենը մինչև Աբասթուման (12 ժամուայ Ճանապարհ է) $97^{1}/_{2}$ վերստ է։

II. Սղուրդէտ և Սամտրէտի մէջ (51 վերստ) օմնիբուսը երթեւեկում է ամենայն օր, վեց ժամուայ մէջ, որը սկսւում է 8 ժ. առաւօտեան։

III. Նովօ-Սենակից-Զուգդիդ։ Օմնիբուսները դուրս են գնում առաւօտեան 8 ժ. Զուգդիդից ժամին 2 ժամին Ճաշից յետոյ. գինը 3 րուբլի։

---

### ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ։

Շոգենաւային երթեւեկութիւնը Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսոյ մէջ։

#### Բաթումից գնում է.

Երեքշաբթի օրերը։ Կէս օրից յետոյ ժ. 4-ին ուղիղ գծով մտնում է Սուխումի և Նովօրոսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը։ Կէս օրուայ ժամը 4-ին ուղիղ գծով, Նովօրոսիյսկի և Կերչի վերայով։

Շաբաթ օրերը։ Երեկոյեան 8 ժամին, շրջանառու ընթացքով (обходн. реисъ) բոլոր նաւահանգիստները պտտելով։

Երկուշաբթի օրերը։ Երեկոյեան արտասահմանեան գնացքով դէպի Կ. Պօլիս։

Գալիս է Բաթում։

Երկուշաբթի առաւօտը, Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Սուխումի վրայով։
Չորեքշաբթի առաւօտը, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։
Ուրբաթ երեկոյեան, Օդեսայից շրջանառու ընթացքով։
Կիրակի օրերը, առաւօտ. Կ. Պոլսից։

Փոթիից գնում է Բաթում.

Երեքշաբթի առաւօտը ժամը 9-ին։
Ուրբաթ երեկոյեան կէսին։
Շաբաթ առաւօտ ժամը 9-ին։

Բաթումից գնում է Փոթի.

Չորեքշաբթի և կիւրակի օրերը, նաւը Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ ամէն շաբաթ Օդեսայից գալիս են և գնում Փոթի երթևեկող ապրանքակիր և մարդակիր նաւեր։

---

ԿԱՍՊԻԱՑ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Բաքուից գնում է

Դ ե ր բ է ն դ, Պ ե տ ր ո վ ս կ և Ա ս տ ր ա խ ա ն՝ չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերը. ցերեկը ժամը 1-ին.

Ո ւ զ ո ւ ն-Ա դ ա՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5-ին։

Լ է ն ք օ ր ա ն, Ա ս թ ա ր ա և Է ն զ է լ ի՝ երկուշաբթի օրերը, ցերեկը ժամը 1-ին։

ԵՐԿԱԹՈՒՂԻՔԸ

I ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ

Գնացքը Թիֆլիս գալիս է

| | | | |
|---|---|---|---|
| Բաթումից, | պոստ. | 11 ժ. | 8 ր. եր. |
| Բագուից, | » | 7 ժ. | 40 ր. առ. |
| Բաթ. մարդ. ապ. | | 8 ժ. | — ր. առ |
| Գանձակից | » | 8 ժ. | 20 ր. եր. |

Գնացքը Թիֆլիսից գնում է

| | | | |
|---|---|---|---|
| Բաթում, | պոստային. | 8 ժ. | 40 ր. առ. |
| Բագու, | » | 12 ժ. | 8 ր. գիշ. |
| Բաթ. մարդ. ապ. գն. | | 3 ժ. | 10 ր. ց. |
| Գանձակ, | » | 9 ժ. | 45 ր. առ. |

II ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.

Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և շաբաթ օրերը։

Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

ՌՕՍՏՈՎ-ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԵԱՆ

| | | |
|---|---|---|
| Վլադիկավկազ. գնում է | 9 ժ. | 30 ր. առ. |
| Ռոստովից գալիս է . . . | 8 ժ. | 48 ր. առ. |
| Ռոստովից գնում է. . . | 7 ժ. | 28 ր. առ. |
| Վլադիկաւկազ գալիս է | 7 ժ. | — ր. եր. |



† ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ
Յունիսի 9-ին, 1890 Թ.

# ԱՍՏՂԱԼԻՑ ԵՐԿԻՆՔԸ

## ԵՒ

## ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ

### I.

Այն ամենը ինչոր կայ տեսանելի կամ անտեսանելի երկինքում և թէ երկրիս վերայ, ասում ենք տիեզերք, և այն տեսութիւնը-գիտութիւնը, որ խօսում է ամբողջ տիեզերքի մասին, ասում են տիեզերագրութիւն (космографія)։ Որովհետև ամբողջ տիեզերքի մէջ չը կայ մի բան, մի առարկայ, որ մարդկային հոգին և միտքը այնքան փառաւորէր և հետաքրքրէր իւր հրաշափառութեամբը որքան աստղալից երկինքը, այդ իսկ պատճառաւ մարդկութիւնը իւր գոյութեան սկզբից մինչև օրս, ոչ մի գիտութեան մասի մէջ այնքան ճիգն չէ թափել, որքան տիեզերագրութեան վերայ։ Այսպէսով մարդս դեռ այդ առասպելական ժամանակներից, իւր մտքով և աչքերով սկսել է դիտել և հետևել, շատ աստղերի և լուսատու մարմինների ունեցած միմեանց հեռաւորութիւնը, շարժումը, ընթացքը և դիրքը։

Չէ թէ հին ժամանակներում, այլ ներկայումս դեռ ևս հասարակ ժողովրդի մէջ նամանաւանդ գիւղացւոց, ինչպէս պարզ գիշերներին երկնակամարի տակ բացօթեայ զրուց անող պառաւ կանայք և հովիւներ գիտեն․ զանազան տեղեկութիւններ, հեքիաթներ, պատմութիւններ և առասպելներ, Գիշերավարի, Լուսաւարի (Արուսեակի Меркури և Փայլածուի Венера) և լուսնոյ մասին և մասներով ցոյց են տալի երկնքի յայտնի և որոշեալ տեղում եօթն-եղբօր (Մեծ արջ համաստեղութեան եօթն



լուսաւոր աստղերը, Большая медвѣдица) Բազումքի Վահագնի (Геркулесъ) Շամփուրի (երեք ուղիղ գծով աստղերը Հայկ համաստեղութեան մէջ Оріонъ), Շան-աստղի (Մեծ-Շուն համաստեղութեան մեծ փայլուն աստղի Сиріусъ) Յարդ-գողին (млечный путь) և ուրիշ շատ աստղերի, որոնց շատ անգամ Արևելքում, զանազան քարվանների առաջնորդներ և ճանապարհորդներ այդ աստղերի միջոցով, մութ գիշերներին գտնում են կորցրած ճանապարհը։ Իսկ ծովագնաց նավապետները քանի որ դեռ կողմնացոյցը (компасъ) գտնուած չէր—աստղերի օգնութեամբ միայն ուղղում էին իրանց նաւի ընթացքը և գտնում ճանապարհը-ինչպէս այժմ հասարակ նաւերը։

### II

Հին դարերում երկինքը ուսումնասիրող (գիտնական) մարդիկ, աստղերի դիրքը, ընթացքը, միմիանցից զանազանելու և մինը միւսի հետ չը շփոթելու համար, բաժանել են զանազան խմբերի և անուանել են այդ խմբերին համաստեղութիւններ, և ամեն մի խմբին նայելով նորա աստղերի ուղղութեանը, դիրքին, չափին, դասաւորութեանը և նմանողութեանը, յատկացրել են այլ և այլ առարկաների մարդոց, կենդանեաց, բուսոց և այլն անուններ։ Ինչպէս մի զոյգ երկու միաչափ միանման փայլող աստղերին անուանել են—երկուորեակներ։ Երկար օձապտոյտ ուղղութեամբ միանման աստղերին ձևացնելով օձ՝ անուանել են վիշապ—օձի համաստեղութիւն, իսկ շատ երկար միաձև և միաչափ աստղերին նմանեցնելով գետի, Յորդանան և ուրիշ գետեր են անուանել և այլն։ Իսկ այն ճանապարհի վերայ, որով մեզ երկրիս բնակիչներիս երկնքի դրից վերաբերութեամբ, որ երևում է և թւում մեզ թէ արևը և լուսինը ընթանում են այդ ուղղութեան վերայ—այդ շրջանում գտնուած համաստեղութեանց անուանել են կենդանակերպներ կամ Զոդիակոսեան շրջան (Зодіакъ)։ Այդ շրջանի վերայ

գտնւում է 12 կենդանակերպ համաստեղութիւններ, որոնցով ամեն մի ամսուայ մէջ երկիրս անցնում է մի համաստեղութիւն, կատարելով այդպիսով իւր ընթացքը արևի շուրջը, և այդպէս ամբողջ Մարտ ամսուայ ընթացքում արեգակը մեր վերաբերութեամբ, երկնքի ղրից մէջ գտնւում է Խոյ (овенъ) կենդանակերպ համաստեղութեան մէջ Ապրիլին—Ցուլ, Մայիսին—Երկուորեակ, Յունիսին—Խեցգետին, Յուլիսին—Առիւծ, Օգոստոսին—Կոյս, Սեպտեմբերին—Կշիռ, Հոկտեմբերին—Կարիճ, Նոյեմբերին—Աղեղնաւոր, Դեկտեմբերին—Այծեղջիւր, Յունուարին—Ջրհոսն, և Փետրուարին—Ձուկն կենդանակերպ համաստեղութիւնների մէջ։

## III

Բայց այն ժամանակից, երբ գիտութեան շնորհիւ հեռադիտակը հնարեցին, աստղալից երկնքում շատ բան յայտնւեցաւ և երևաց որ մեզ մեր հասարակ աչքով երևող անթիւ փոքր և մեծ աստղերը—բացի մի քանիսից—բոլորն էլ ոչ այլ ինչ չէին, եթէ ոչ մի-մի փայլուն արեգակներ՝ ինչպէս մեր արեգակը, և նորանից աւելի մեծ, թէև իրանց ահագին հեռաւորութեան պատճառաւ մեզ շատ փոքր են երևում։ Քննելով նկատեցին որ արևի վերայ բծեր կան, լուսնոյ վերայ լեռների նման բաներ, և երկնքի այն տեղերում որտեղ մութն էր երևում մեզ, երևացին անհամար թիւ աստղերի. սկսեցին աւելի կանոնաւորել իրանց արած հաշիւները, թէ ինչ աստղ որտեղ է երևում—որքան ժամանակ, որտեղում և երբ ծագում և ինչ ուղղութեամբ ընթանում։ Այսպիսով մինչև մեր օրերը—գիտնականները-աստղագէտները—գիտութեան շնորհիւ և հեռադիտակի միջոցաւ ոչ թէ դիտել և քննել են երկնային տարածութեան մէջ մօտ երեք հազար միլիոն մղոն, այլ և արել են նշանաւոր գիւտեր, սրամիտ հաշիւներ և յայտնի նախագուշակութիւններ։ Ասածներիս ապացոյց կարող են լինել այն՝ որ հա-



բիւրաւոր տարիներ առաջ, րոպէ առ րոպէ հաշւում և գուշակում են, որ երկնքի այս ինչ տեղում այս ինչ օր, այս ինչ ժամին և րոպէին պատահելու է լուսնոյ կամ արևի խաւարում, կամ երևալու է աստւոր (комета) և իրօք այդպէս էլ պատահում է և կատարւում նոցա գուշակութիւնը։

Երկար փորձեր անելով և ճանապարհորդելով իմացան և գտան որ ինչպէս երկնային միւս մարմինները, այնպէս էլ մեր երկիրը ձևով կլոր է և պտտում է արևի շուրջը մէկ տարում (365 օր. 6 ժ. և 54 ր.) իւր առանցքի վերայ պտտելով օր ու գիշերուայ մէջ (24 ժամում), այնպէս որ երեսն արևը դարձրած ժամանակ լինում է ցերեկ, իսկ հակառակ կողմը գիշեր։ Յետոյ նկատեցին, որ աստղերից մի քանիսը անշարժ փայլում են, իսկ մեծ մասը (բոլորը) փայլելիս շողշողում, որից յայտնւեցաւ որ, անշարժ փայլողները մոլորակներ են, իսկ շողշողողները—պսպղողները—անշարժ աստղեր կամ արեգակներ ինչպէս մեր արեգակը։ Ինչպէս երկիրը պտտում է արևի շուրջ, այնպէս էլ լուսինը պտտում է երկրիս շուրջը 28 օր, 49 րոպէ և 45 վայրկեանում։

## IV

Բացի երկրագնդից արևի շուրջը պտտում են ուրիշ մոլորակներ ևս, երկրից աւելի մօտ պտտում են Արուսեակը, Փայլածուն, յետոյ երկիրս, Հրատը, Լուսնթագը, Երևեակը, Ուրբանոսը և Նեպտունը։ Արեգակը աւելի մեծ է քան թէ այս իւր շուրջը պտտւող մոլորակները, իսկ երկրագնդից մեծ է 1407000 անգամ, թէև մեզ շատ փոքր է երևում։ Մեր արեգակի շուրջը պտտւող, բոլոր մոլորակներին—ինչպէս երկրին և աստւորներին—այս բոլոր խմբին ասում են Արեգակնային—Համակարգութիւն (солнечная система)։ Այդպիսի Արեգակնային-համակարգութիւններ, գիտնականները հազարներով են հաշւում։ Յայտնի փիլիսոփայ Քանտը միայն 2000 աւելի արեգակներ էր հաշ-

ւում։ Ինչպէս ամբողջ տիեզերքի երկնային մարմինները միմեանց հետ կարգաւորուած և կապուած են յայտնի զօրութեամբ և իրանց ընթացքի և շարժման մէջ ձգողական ոյժի զօրութեամբ պահպանում են հաւասարակշռութիւն, այնպէս էլ մեր արեգակը (իրան համակարգութեամբ) իրան շուրջը պտտւող մոլորակներին քաշում է դէպի ինքը—նոցա փոխադարձ ձգողական զօրութեան հաւասարակշռութեան հետ։ Եւ որքան մոլորակը աւելի մօտ է արևին, այնքան աւելի է արևի ձգողական ոյժը, որով և ՝արագացնում է մոլորակի պտտելը—ընթացքը արևի շուրջը ինչպէս և ներքոյ գրեալներից եւս երևում է.

I Արուսեակը արևից հեռու է 65 միլ մղոն, պտտւ. 88 օրում
II Փայլածուն (Венера) . . 103 » » » 225 »
III Երկիրը . . . . . . 143 » » » $365^1/_4$ »
IV Հրատը (Марсъ). . . . 215 » » » 687 »
V Լուսնթագը (Юпитеръ) . 700 » » » 12 տարում
VI Երևեակը-Կռոն.(Сатурнъ)1300 » » » $29^1/_2$ »
VII Ուրբանոսը . . . . . — » » » 85 »
VIII Նեպտուն (Нептунъ) 5208 » » » 164 »

Ուրեմն արևից ամենից հեռու մոլորակը Նեպտունն է և նորա համար էլ նորա արևի շուրջը պտտելը տևում է 164 տարի, և մինչև որ Նեպտունը արևի շուրջը մի շրջան անէ, երկիրը արդէն 164 անգամ արած կը լինի։ Հետևապէս և Նեպտունի վերայ, եղած տարուայ չորս եղանակներից ամեն մինը տևում է 41 տարի։ Մոլորակներից, քիչերն են մեզ պարզ երևում։ Բացի Արուսեակից և Փայլածուից, բոլոր մոլորակները, իրանց արբանեակներն ունին, ինչպէս մեր երկիրը ունի մի արբանեակ լուսինը, բայց միւսները 2-ից մինչև 9 թւով որոնք, ինչպէս լուսինը պտտում է արևի շուրջը, և երկիրս իւր արբանեակ—լուսնով պտտում է արևի շուրջը, այդպէս էլ բոլոր մոլորակները իրանց շուրջը պտտւող արբանեակներով, պտտում են արեգակի շուրջը և այդպէս էլ արեգակային ամբողջ համակար-



† ԾԵՐԵՆՑ (ՇԻՇՄԱՆԵԱՆ)

գութիւններ եւ իրանց շուրջը պտտուող երկնային մարմիններին իրանց հետ առած, պտտում են տիեզերքի-կենդրոն ուրիշ մեծ արեգակի շուրջը։

V

Լուսինը երկրի շուրջը պտտելով, արեւի և երկրի մէջ եղած և պատահած ստուերներովը մեզ երևում է զանազան ձևով, ուղղութեամբ և դիրքով։ Այդ ստուերներովը աւելի ապացուցվեցաւ երկրագնդիս կլորութեան ձևը։ Որովհետև մոլորակները և արբանեակները իրանց լոյսը ստանում են միմիայն արեգակից, սորա համար երբ երկիրը իւր ընթացքի միջոցին ընկնում է



ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ՝ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ:

լուսնոյ և արևի մէջ, այդ ժամանակ պատահում է—լուսնոյ խաւարումն, երբ լուսինն է ընկնում արևի և երկրի մէջ, պատահում է արեգակի խաւարում։ Մեր արեգակի շուրջը պտտում են նաև տտաւորներ։ Բայց նոքա շրջում են նեղ ընթացքով—ձուաձև (элепсисъ) և որոնք որքան աւելի մօտենում են արևին իրանց ընթացքի ժամանակ՝ այնքան աւելի արագ են ընթանում, այնպէս որ մէկ ժամուայ մէջ մէկ միլիոն վերստից աւելի



են վազում։ Դորա համար էլ միշտ մեզ շուտ երևում, են շուտ էլ անհետանում են և երկար ժամանակ մեզ չեն երևում։ Այս տտաւորները թէև շուտով անհետանում են, բայց կրկին որոշեալ ժամանակին վերադառնում են դէպի արևը և մեզ երևում։ Նոցանից մի քանիսը երեք տարուց—առանց հեռադիտակով էլ կարելի է նկատել, մի քանիսը վեց տարում, որոնց թւումն է և Բէլլի անունով տտաւորը։ Գալլէի տտաւորը ամեն մի 74—75 տարին մի անգամ է գալիս և մեզ երևում, վերջին ժամանակ նա երևաց 1835-ին, մէկ էլ կերևայ 1909—1910 թւին։ Իսկ 1811 թւի երևեցած մեծ տտաւորը, ճիշտ հաշւով պտտում է արևի շուրջը 2888 տարուայ մէջ, և որպէս հաշւում են իւր հեռաւորութեան կէտը արևից է 300,000,000,000 մղոն։ Ուրեմն մէկ էլ կ՚երևայ 4699 թ. Տտաւորների մեծ մասը բաղկացած է գազային կամ հեղուկ նիւթից և մինչև անգամ առանց գնդի։ Արևին մօտիկ եղող մոլորակները աւելի կարծր են և որքան հեռանում են այնքան աւելի մեծ են։ Մեր երկրագնդից Արուսեակը և Փայլածուն աւելի կարծր են, բայց փոքր են, իսկ ուրիշ մոլորակներից երկիրս աւելի փոքր է։

VI

Այսպէսով մեր երկրագունդը—մեր արեգակային համակարգութեան մէջ կազմում է մի աննշան կէտ, և արեգակն ևս չնայելով իւր միլիոն ու կէս անգամ մեծ լինելովը մեր երկրագնդից, իւր ամբողջ համակարգութեամբը ևս կազմում է մի ամենաչնչին կէտ տիեզերքի բազմաթիւ արեգակային համակարգութեանց մէջ։ Հնարելով աւելի մեծ հեռադիտակներ ինչպէս աստցինք, նկատեցին մեզ փոքր երևացող աստղերին որոնք մի մի արեգակներ են. դոցանից օրինակ Մեծ-Շնաստղը (сиріусъ)։ Այս աստղը փայլում է կապոյտ գոյնով Հայկ համաստեղութեան աջ կողմը և երևում է մեզ, որ հեշտ կարելի է գտնել երկնակամարի վերայ Նոյեմբերից մինչև Փետրուար կէս գիշերներից 9-ից

մինչև 12 ժամը (երկնակամարի հարաւ-արևել կողմ) նայելիս (հեռադիտակով) այնպէս պայծառ լոյս է արձակում, որ ոչ թէ դժուար է նորան նայել, այլ աչքերին կարող է վնասել, թէև մեզանից հեռու է գտնւում ինչպէս հաշւում են 1,275,715,000,000,000 մղոնից աւելի հեռաւորութեան վերայ։ Գիտութիւնից յայտնի է, որ լոյսը մի վայրկեանի մէջ անցնում է 282000 մղոն, իսկ ձայնը 175 սաժէն, և այս հիման վերայ հաշւել են որ արեգակից մեզ լոյսը հասնում է 8 րոպէի մէջ։ Իսկ ամենամօտ ուրիշ արեգակնային համակարգութեանց միջի աստղերից լոյսը մեզ հասնում է 17 տարուայ մէջ։ Մինչև օրս գիտութեան շնորհիւ հեռադիտակով տեսնուած են ամենահեռաւոր աստղերից, որոնց լոյսը հասնում է մեզ 130 տարում։ Միմիայն Ցարդգողի վերայ 5000 ից աւելի աստղեր են հաշւում որոնք, այնպէս հեռու են միմեանցից—շատեր մինչև անգամ այնպէս-ինչպէս Տնիկ աստղը մեզանից, բայց մեզ չեն երևում և եթէ երևում էլ են այն էլ ինչպէս մի կէտ։

Իսկ եթէ մարդս կարողանար բարձրանալ փորձի համար ամենամօտիկ աստղի վերայ և այնտեղից նայէր մեզ, մեր երկրագունդը, ինչպէս և մեր արևի շուրջը պտտուող մոլորակները իրանց արբանեակներով նրան անտեսանելի կը լինէին։ Միմիայն մեր արեգակը կերևար, այն էլ այնպէս ինչպէս՝ մեզ երևացող աստղերից մինը։

Վերջին ժամանակները արդէն գիտնականները հասել են այն եզրակացութեան և գտել են որ ինչպէս մեր երկիրը և մոլորակները պտտում են արևի շուրջը, այդպէս էլ բոլոր երկնային մարմինները շարժւում են և ոչ մին իւր տեղում կանգնած չէ. այդպէս էլ ամբողջ տիեզերքը շարժողութեան մէջ է և ինչպէս ուրիշ արեգակնային-համակարգութիւնները, այնպէս էլ մեր արեգակը իւր հետ առած բոլոր իւր շուրջը պտտուող մոլորակներին իրանց արբանեակներով և տաւորներին պտտում է տիեզերային մեծ կենդրոն—արեգակի շուրջը 3,811,000



տարուայ մէջ, որը կազմում է մեր արեգակային համակարգութեան մի շրջանը, արեգակի մի տարին։

Բացի դորանից մարդուս աչքերը այնքան տկար են, որ մինչև անգամ մեզ մօտիկ գտնուող մոլորակներից միմիայն մի քանիսին ենք տեսնում, իսկ միւսներին չենք էլ կարողանում տեսնել։ Եթէ մեր աչքերը աւելի կատարելագործված լինէին—մի քանի հազար անգամ աւելի սրատես, այն ժամանակ այնքան անհամար միլիօնաւոր լուսատու մարմիններ կերևային այնտեղ, ինչտեղ որ այժմ ոչինչ չէ երևում և այնքան աւելի նոր հրաշքների ահագին քանակութիւն կ՚յայտնուէր։ Այսպէս ամենայն լուսատու երկնային մարմինները՝ ունեն իրանց գործունէութեան որոշեալ շարժումը, ընթացքը և ուղղութիւնը։ Եւ ամենայն տիեզերային մարմին ունի իւր բնակիչը, որոնք իրանց կեդրոն—աղբիւրից ստանում են լոյս, կենդանութիւն, ոյժ և ուղղութիւն։ Զնայելով այդ անհամար բազմութեան և նոցա ընթացքին, այդ բոլոր այնպէս է դասաւորուած, մինը միւսի հետ այնպէս զուգաւորուած, որ բոլորը խկզբանէ յետ է ընթանալով յայտնի ուղղութեամբ, հասնում են իրանց նպատակին և՞ վախճանական կէտին։ Բոլորը գործում են ներդաշնակ, շարժւում են արագ, անդադար և անփոփոխ, միևնոյն ժամանակ—մինը միւսի ընթացքը և շարժումը չխափանելով,—բնութեան ամենախիստ օրէնքի տակ և ամենաճիշդ կարգապահութեամբ։ Երկրային արարածներից ոչ ոք չի կարող չափել և հաշւել այդ բոլոր արեգակների և աշխարհների քանակութիւնը, հեռաւորութիւնը, մեծութիւնը, կապակցութիւնը, շարժողութիւնը և թէ երբ կը կորցնէն իրանց լոյսը և ոյժը և թէ երբ էր և կը լինի այդ բոլորի սկիզբը և վերջը։ Միայն մի բան հաստատ կարելի է ասել, որ անհուն տիեզերքի մէջ—Արարչի իմաստուն կարգադրութեան տակ, մշտնջենաւորապէս թագաւորում է անվերջ կենդանութիւն, զօրութիւն և շարժողութիւն, և ամեն բան տիեզերքի մէջ պատմում է Արարչի անչափ Մեծութիւնը, Նախախ-

նամութեան կենդանի ոյժը, բնութեան անբացատրելի խորհուրդը և երկրային արարածներին (մեզ մահկանացուներիս) իրանց սրբազան պարտաւորութիւնները դէպի փառահեղ ստեղծագործող Աստուածութիւնը։

Իսկ մահկանացու մարդը քննելով — անդադար ուսումնասիրելով աստղալից երկինքը և խոստովանելով իւր մօտ թուլութիւնը հանելու, զարմանալի և հրաշալի ստեղծագործութեանց գաղտնիքներին,—հիացած փառաբանում է ստեղծագործող Արարչին և խոնարհում է իւր գլուխը, նորա անիմանալի և անբացատրելի տնօրէնութեան՝ անվերջ և անսկիզբ էութեան առաջ։

Ահա այն օրինակելի իմաստութեան ուսումն՝ որ աւանդում է տիեզերագրութիւնը և այն սրբազան բարբառելի պատգամը, որ տալիս է մեզ մահկանացուներիս՝ փառահեղ և հրաշալի աստղալից երկինքը։



† Ր Ա Ֆ Ֆ Ի

Ապրիլի 24-ին։ 1888 Թ.



† ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆՑ

# ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆ

## ՄԵՌԱԾ ԿԱՐԾԵՑԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Մարդկային կեանքին սպառնացող անակնկալ դիպուածներն և վտանգաւոր հիւանդութիւնները տեղիք են տուել մարդկանց ոչ թէ միմիայն իւրեանց անձը պահպանելու, այլ և դրել է նրանց վերայ պարտաւորութիւն ամէն հանգամանքներում միմեանց օգնելու: Եւ փորձով ևս յայտնի է, որ որքան մի ազգ աւելի քաղաքակրթուած է, այնքան նորա մէջ համերաշխաբար գործելու—միմեանց օգնելու գաղափարը աւելի կատարելագործուած է, և այնքան էլ նոցա ամէն մէկի պատիւը յարգուած և իրաւունքը պաշտպանուած: Սորա համար համարելով ամէն մարդուն մեր սրտին մօտիկ, ոչ թէ միայն պիտի կարեկցութիւն ունենանք այն ամէն վտանգներից ազատելու նրանց, որոնցով սպառնում է նոցա կեանքը, այլ և տեղեկանալու այդպիսի ժամանակ գործադրած միջոցների և հնարքների մասին:*

*Որովհետև շատ անգամ մարդիկ կորչում են նորա համար, որ շրջապատողները չեն կամեցել կամ չեն գիտացել ի՛նչպես օգնել նորանց, նամանաւանդ տգէտ ազգերի և ժողովրդի մէջ, որտեղ առաջանում են մեծամեծ վնասներ—մեծ մասամբ կռապաշտութեան ժամանակից մնացած նախապաշարմունքից և սխալ հասկացողութիւնից:*

*Այդպիսի դիպուածներիցն և վտանգաւոր հիւանդութիւններիցն է բժշկականութեան մէջ յայտնի լէտարգիական քունը* (летар-

гическій сонъ)։ Դա մի քնած դրութիւն է, որի մէջ ընկնում են մի այլ հիւանդութեան տակ ընկած մարդիկ՝ ամբողջ շաբաթներ և ամիսներ շարունակ քնելով, որի հետևանքը շատ անգամ այն է լինում, որ այդպիսիները մեռած համարուելով թաղւում են կենդանի։

Այստեղ իբր ապացոյց և թէ հետաքրքրութեան համար մէջ ենք բերում այն, որ հին Մարաց Զրադաշտի վարդապետութեամբ ժողովրդի մէջ այն կարծիքն էր արմատացել, որ իբր թէ մարդու մեռնելուց յետոյ, հոգին մտնում է մի այլ կենդանու մէջ։ Իսկ շատ ազգերի օրինակ՝ նոյն իսկ Ռուսաց հասարակ ժողովրի մէջ տարածուած է այսպիսի մի սխալ հասկացողութիւն, որ իբր թէ չար հոգու ազդեցութեամբ մեռելները գիշերները դուրս են գալիս գերեզմաններից, և առաւօտեան կրկին մտնում են իրանց բնակարանները. *) օրինակ, ինչպէս „Волынъ" լրագիրը Ռուսաստանում 1888 թ. լետարգիական քնով թաղուածի հետևեալ դէպքն է պատմում։ Կ.... քահանային իւր հեռաւոր անտառաբնակ ծխականներից մինը հրաւիրում է թաղելու իւր (գիւղացու) կնոջը, որը մեռել էր որդեծնութեան ժամանակ։ Յուղարկաւորութիւնը կատարելուց յետոյ դագաղը իջեցրին գերեզման։ Հանգուցեալի երեխաները և բարեկամները շտապում են դէպի տուն, մնում են միայն գերեզմանափորները,

*) Այսպիսի մի տարօրինակ դէպք էլ պատահել, սրանից մօտաւորապէս 30 տարի առաջ Ղազախու գաւառի Ուզունթալա գիւղում։ Մի նոր թաղած մարդու գերեզմանից միշտ ձայն է եղել լսւում, գիւղացիներից շատերը վախից գիշերները երազի մէջ տեսնում են իբր այդ հանգուցեալը կանչում է նրանց։ Այդ բանից սարսափած մի քանի հոգի միմեանց ետևից կարճ միջոցում մեռնում են. գիւղացիք դրա դէմ միակ միջոցը համարում են այն առաջին ննջեցեալի գլուխը կտրելը, որը նրանք միաձայն վճռում են և հանգուցեալին գերեզմանից հանելով գլուխը կտրում են, որից իբր արիւն է հոսում և անմիջապէս այրելով թաղում են կրկին։



որոնք լցնում են գերեզմանը. սառած կաւէ ծանր հողը ազմուկով դիպչելով դագաղի կափարչին, հանգուցեալին արթնացնում է, որը սկսում է բարձրաձայն օգնութեան կանչել։ Վախեցած գերեզմանափորները, չը նայելով թշուառի պաղատանքին, աւելի են սկսում գերեզմանը հողով լցնել, որից յետոյ շտապով վազում են հանգուցեալի մարդու տունը, պատմում հաւաքուած ժողովրդին, թէ ի՛նչպէս չար հոգին մտել էր հանգուցեալի մէջ, ի՛նչպէս հանգուցեալը խնդրել էր դուրս հանել իրան գերեզմանից, խոստանալով բոլորին ընծայել իւր բոլոր ունեցածը, և ինչպէս նա վերջին անգամ հառաչել էր երբ բոլորովին գերեզմանը ծածկել էին հողով։ Այստեղ սկսվեց իրարանցում և վճռեցին ժամկոչին ուղարկելու քահանայի մօտ, բոլոր գիւղի կողմից խնդիրքով, խրելու-ծակելու այդ դագաղը փայտեայ սրածայր ձողով, որպէս միակ միջոց արգելք դնելու նորա կարողութեանը գիշերները շրջելու և ժողովրդին անհանգստացնելու։ Ապշած քահանան իսկոյն վազեց գերեզմանատուն, որտեղ ժողովուրդը խռնուած էր նոր գերեզմանի մօտ և հրամայեց փորել գերեզմանը այն յուսով, որ կարողանայ թշուառ զոհի կեանքը փրկելու, բայց արդէն ուշ էր։

Մի ուրիշ երկրում ևս մի ժամանակ պատահել է հետևեալ դէպքը։ Մի աղքատ երեխային մի ձմեռուայ գիշեր ոչ ոք օթևան չէ տալիս, երեխան գնում է քնում պատի տակին. միւս առաւօտ նրան գտնում են սառած։ Մի քանի մարդիկ խղճալով, միմեանց մէջ փող են հաւաքում, առնում են մի դագաղ և նրա մէջ դնելով երեխայի դիակը տալիս են մշակին, որ տանի թաղի։ Մշակն դագաղը մի կողմ դնելով, սկսում ինքը գերեզմանը փորել։ Այդ ժամանակ դագաղի երեսը բաց լինելով, հանգուցեալի վրայ ընկնում են արևի ճառագայթները, որոնցից տաքանում է երեխայի սառած մարմինը և երեխան վեր է կենում դագաղի մէջ նստում և քաղցած լինելով հաց խնդրում։ Ապշած գերեզմանափորը բահը ձեռքից վայր գցելով, երեխային մի ձեռքում առնելով,

միւսում դագաղը, մնում է քաղաք և պատմում տարօրինակ եղելութիւնը։

Մի ուրիշ դէպք։ „Волынскій Вѣстникъ“ լրագիրը պատմում է գիւղական սնոտիապաշտութեան մի հազուագիւտ դէպք, որ պատահել է անցեալ 1890 թ. յունուար ամսում։ Օրէնբուրգի նահանգում գտնուող Սուրովկի գիւղում յիշեալ գիւղացիներից մինը յանկարծամահ վախճանում է։ Երբ դագաղը գերեզման են իջեցնում, բոլոր ներկայ գտնուողները զարմացած տեսնում են, որ դագաղի մեխերով ամրացրած ծածկոցը բաց է լինում և դագաղից դուրս է գալիս պատանքած ննջեցեալը։ Ամենքը սարսափած փախչում են, փախչում է մինչև անգամ քահանան ևս։ Ննջեցեալը ևս ցրտից մրսելով նոյնպէս շտապեց գիւղը, բայց գիւղացիք փակուեցան տներում և ոչ ոք ներս չէր թողնում նրան։ Վերջապէս կարծուած ննջեցեալին յաջողուեցաւ մի պառաւի տուն մտնել, որը չէր կարողացել շուտ կողպել իւր տան դուռը։ Մինչ այդ՝ գիւղացիք վճռեցին վերջ տալ կախարդած ննջեցեալին։ Նրանք զինուեցան հաստ փչեայ տեգերով—որ նրանց հասկացողութեամբ լաւ է ներգործում—և կարծուած կախարդի (ննջեցեալի) կարճ դիմադրութիւնից յետոյ, պաշարեցին նրան և տեգերով հողին մեխեցին։ Քահանան սարսափից ուշքի գալով ենթադրեց, որ ննջեցեալը լետարգիական քնի մէջն է եղել, ուստի մարդ ուղարկեց մօտակայ կառավարչի յետևից։ Երբ կառավարիչը եկաւ, ամբոխը ցրուեցաւ իրենց տները, վճռելով երեկոյեան դէմ մերձակայ ճահիճը գցել դիակը։ (Տես «Нов. Обоз» 2 մարտի 1890 թ.)։

Իսկ մեր ժողովրդի մէջ առհասարակ (հիւանդութեամբ) հոգին աւանդելուն պէս, մարդկանց մի որ և իցէ օգնութիւն հասցնելու տեղ, սկսում են բամբակներ դնել բերանին, ծնօտը կապել կամ վրան սաւան գցել, և այդպիսով աւելի արգելել շնչառութիւնը, որ չափազանց վնասակար է. որովհետև լինում են դէպքեր, երբ մեռնողները իսկապէս մեռած չեն լինում, այլ



ենթարկւում են լետարգիական քնի։ Այսպիսով նախազգուշութեան միջոցներ չը գործ դնելով շատ անգամ թաղում են լետարգիական քնով-քնածներին կենդանի, իբրև ննջեցեալ։ Եւ այն ոչ թէ մեր կամ թէ վայրենի և տգէտ ազգերի մէջ, այլ և լուսաւորեալ երկիրներում, որտեղ չը կան մեռեալ կարծեցեալների համար քնարաններ, որոնք բաղկացած են հանգստարաններին կից, մի քանի մաքուր սենեակներից, որտեղ գտնւում են բոլոր անհրաժեշտ գործիքներ, դարմաններ և ամենայն յարմարութեամբ շինուած մետաղեայ թելերից հիւսուած մահճակալներ մեռեալ կարծեցեալներին զետեղելու, որոնց կենդանութեան մի փոքր նշոյլ ցոյց տալուն պէս և մի թեթև շարժուածքից ելեքտրական հեռագրի հաղորդող ձայնը հանելով կից սենեակում պահապանին կամ հերթապահ բժշկին—անմիջապէս դիմում են օգնութեան և ազատում թշուառ մահացեալներին։

Ամերիկայի և Եւրոպայի շատ քաղաքներ ունին այսպիսի քնարաններ։ Թէ որքան օգտաւէտ են և որպիսի արդիւնք են ցոյց տալիս այդպիսի քնարանները, մէջ ենք բերում այստեղ Ամերիկայի Նիւ-Եօրկ քաղաքի քնարանը։ Այդտեղ կասկածելիներին 8 օրից առաջ չեն թաղում՝ եթէ որ մարմինը չէ փթել, այլ հանգուցեալներին դնում են առանձին կառուցուած քնարաններում, կամ մեռեալների տներում և այնտեղ պահում են մինչև 8 օր, որտեղ նկատուած է, որ 1000 մեռնողից 5-ը կենդանանում են, և այդպիսի մեռնողներից մի քանիսը առողջանում են և երկար էլ ապրում։

Ուրեմն եթէ այսպիսի նախազգուշութիւններ չը լինէին այն ժամանակ այդ հինգ մեռածները, զարթնելով գերեզմանի մէջ, պիտի մեռնէին կենդանի թաղուելու չարաչար մահով։

Թէև մահուան նշաններ շատ կան, բայց ստոյգ նշանները միմիայն երկուս են։ Առաջին—դիակի նեխումը կամ փթումը, իսկ երկրորդ՝ վեց շաբաթուայ ժամանակամիջոցում անփոփոխ

մահացեալ դրութիւնը։ Եղել են օրինակներ, թէև և շատ հազիւ, որ մարդիկ 2—3 ամիս շարունակ առանց շնչառութեան, անշարժ, համարեա մեռած լինելով, վերջը կենդանացել են. բայց առհասարակ այդ մեռած կարծեցեալների մեծ մասը կենդանանում է երեք օրից յետոյ։ Սրա համար էլ Ռուսաստանում օրէնքով արգելուած է այդ ժամանակից վաղ մեռածներին թաղել։

Մեռած կարծեցեալներին, կենդանի թաղելուց ազատ պահելու համար, եթէ դիակի փթումը չէ սկսվում՝ չը պէտք է շտապել թաղելու։

Հետևեալ հիւանդութեամբ մեռածներին պէտք է զգուշանալ և շուտ չը թաղել,—անշնչացածներին, շոքից խփածներին, ցրտից սառածներին, ջրից խեղդուողներին, կաթուածքից մեռնողներին, կայծակից հարուած ստացողներին, ածուխի հոտից խեղդուողներին, խեղդամահ եղածներին, լուսնոտներին, յղութեամբ—ծննդականութեամբ մեռածներին. որովհետև այդ հիւանդութիւնների ժամանակ մեծ մասամբ վրայ է հասնում լեթարգիական քուն ասուած հիւանդութիւնը, և այդպիսի հիւանդները համարվում են մեռած կարծեցեալներ։ Նոյնանման մի հիւանդութեամբ տանջւում էր մեր հարևան №-ը նա ծառայում էր և շարունակում է այժմ ևս, գործակատարի պաշտօնով Թիֆլիսում մի յայտնի վաճառական Գ... խանութում։ Այս №-ին շատ անգամ պատահում էր, որ ամբողջ շաբաթ, մինչև անգամ 15 օր քնում էր. նրա տանեցիք իմանում էին որ №-ին մի այդպիսի քուն գալիս էր, և որքան աշխատում էին զարթեցնել չէր զգաստանում, մինչև որ ինքը չը զարթնէր։ Բայց №-ի քնելու այս պատմութեան մէջ հետաքրքիրն այն էր, որ, օրինակ եթէ 15 օր քնելուց յետոյ յանկարծ արթնանում էր, տեսնում էր, որ արեգակը բարձրացել էր և ժամացոյցին նայելով ժամի 9-ն է կամ 10-ն է, շտապով սկսում էր շորերը որոնել, որ շտապի խանութ և իրան ուշացած կարծելով համարում էր, որ 6—7 ժամ աւելի է քնել։ Այժմ ահա 6—7



տարի է, որ №-ը այլ ևս այդքան երկար չի քնում և բոլորովին առողջացել է, միմիայն ականջների ետևից արիւն առնելով, որը նա ամեն տարի շարունակում է գարնան սկզբին։

Պատահել են դէպքեր, որ չէ թէ մինչև 15 օր, այլ թէ երեք ամսից յետոյ էլ եղել են այդ քնից արթնացողներ։

Այս վերոգրեալներից յայտնի երևում է, թէ որքան կարեկցութիւն և խնամք է հարկաւոր ունենալ այդպիսի հանգամանքներում, և որքան հաճելի և անհրաժեշտ է, մեր մէջ ևս առանց բացառութեան և գիւղերում ունենալու այնպիսի տեղեր, ինչպէս ուրիշ երկիրներում—քնարաններ—գերեզմաններին կից, որտեղ կարելի լինէր այդպիսի կարծեցեալ մեռելներին պահել մինչև նրանց փթելը և այսպիսով ունենալ զգուշութիւն, որպէս զի լեթարգիական քնով-քնածները մեռած չը համարուին և և գերեզմանի մէջ տանջուելով կենդանի չը թաղուին։

Վերջացնելով այս համառօտ տեսութիւնը միմիայն մեռած կարծեցեալների մասին, մէջ ենք բերում. ուշագնացներին կամ անսպասելի կերպիւ մարդոց վրայ հասնող վտանգներից փրկելու և ազատելու միջոցները։

---

## ՈՒՇԱԹԱՓ ՄԵՌՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ամենից առաջ պէտք է իմանալ ուշաթափ-մահուան պատճառը. դրա համար առանց շրջապատողների կարծիքներին ենթարկուելու պէտք է սառնասիրտ և հանգիստ լինել։ Որովհետև պատահում է որ ուշաթափ մահը ոչնչով չի բացատրւում, այդ դէպքում պէտք է—կարգին զննել ողջ մարմինը—քննել, որոնել գլխի վրայ պակասութիւններ, բերանում կամ կոկորդում չը կա՞յ արդեօք մի որ և է այլ մարմին, առարկայ կամ որ և է բծեր, հոտ, որոնք թունաւորելու յատկութիւն ունին. նայել հանդերձը, բնակարանը որտեղ պատահեցաւ մահը և այլն և այլն։ Դրա հետ միասին, առանց րոպէ կորցնելու,

ուշաթափ մեռնողին զննելիս աշխատում են ուշքի բերել սովորական հանրածանօթ միջոցներով, որոնք հետեւեալներն են.

1) Շորերը թուլացնել, կոճակները ցեղանել, բանալ վիզը և կուրծքը, թուլացնել գօտին և այն ամենը, որով ամրապնդած է ստամոքսի կամ այլ մարմնի մասը. մեռնողի դէմքը քամին և դէպի լուսամուտը դարձնել կամ դուռը, որը անպատճառ պէտք է բանալ, թէկուզ ժամանակը ցրտային էլ լինի:

2) Պէտք է վերականգնեցնել բնական շնչառութիւնը, մեռածին կողքի վրայ պէտք է դնել, գլուխը պահպանել բարձր բռնելով, փետրամազով գրգռել քթի ներքնամաշկը կամ յարդի ձողով 10 անգամ և մէկը միւսից շուտ-շուտ սրսկել ցուրտ ջրով դէմքը և կուրծքը, իւրաքանչիւր անգամ ցամքացնելով ջուրը:

3) Օգնել արեան շրջառութեան վերականգնելուն, ձեռքերով ողջ մարմինը հարելով և անդամները միմեանցից հեռացնելով:

Եթէ այսպիսով չ՚ յաջողուեցաւ գտնել և հեռացնել մահուան պատճառը, բայց յիշելով որ կենդանացնելը կարելի է և սրտի կատարեալ կանգնած ժամանակը, պէտք է գործադրել կենդանացուցիչ բոլոր միջոցները, որոնցից գլխաւոր և ամենակարեւորն է:

Արուեստական շնչառութիւնը, որը գործադրւում է զանազան կերպիւ, մեռածին պառկացնում են դէմքը դէպի յատակը դարձրած. Նրա կրծքի տակը դարսում են իրան շորերը ծալած, յետոյ հանդարտ կերպով դարձնում են նրան կողքի և մէջքի վրայ (ներշնչումն), իսկ յետոյ արագապէս նորից դարձնում են դէմքով դէպի յատակը (արտաշնչումն): Այդպէս կրկնում են 15—20 անգամ մի րոպէում և իւրաքանչիւր անգամ, երբ դէմքը ուղղած է ցած, կարելի է և մէջքը թեթև ճնշել, կողքաճիւղերի վերջին ծայրերից դէպի գլխի ուղղութեամբ օգնելով օդի դուրս քշուելուն (Մարշալ-Գալլ):

Ըստ Սիլվէրստի, մեռածի լեզուն հանելուց և ներքին ծնոտի վրայ պնդացնելուց յետոյ, նրան դնում են մէջքի վրայ թեք, հարթութեան վրայ, օրինակ սեղանի վրայ, որի մի կողմի



ոտքերի տակ դարսած են աթոռներ, յետոյ մէկը կանգնում է մեռածի գլխի կողմը, բռնում է երկու ձեռքի արմունկներից բարձր և հաւասարաչափ բարձրացնում է նրանց. արմունկները հասցնում է քունքերին և քաշում է դէպ ինքը: Դրանից յետոյ արմունկները միևնոյն ուղղութեամբ տանում են դէպի կրծքի կողմերը և պինդ սեղմում են կրծքի վանդակին (արտաշնչումն): Արտաշնչմանը օգնում է և փորին ճնշելը ձեռքերով և ծռած ծընկների դէպի փորը թեքելը, իսկ ներշնչմանը—ոտքերի ուղղելը: Pacini այս միջոցը գտնում է օգտաւէտ միայն մկանունքների դիակնանալու ժամանակը և առաջարկում է այլ միջոց. քանի որ դիակները, երբ նրանց ձեռքերից ու ոտքերից սանում բերում են, առաջացնում է խիստ ներշնչումն, իսկ սեղանի վրայ դնելիս արտաշնչումն, ապա պէտք է մեռածին բռնել կռան տակերից փոքր բարձր և քաշել դէպ ինքն (ներշնչումն), իսկ յետոյ յետ տանել (արտաշնչումն): Եթէ այդ միջոցին չի լսւում կոկորդի միջով սահուող օդի խռմփոցը, ապա լեզուն դուրս հանելով, թեթև ճնշում են մատներով վահանաձև դունակի ներքևի անկիւնների հանդէպ, ըստ որում (epiglottis) իրաւ բարձրանում է: Երբ յայտնւում են կեանքի առաջին նշոյլները, դեռ չը պէտք է թողնել արուեստական շնչառութիւնը և պէտք է յիշել այստեղ, որ վերակենդանութիւնը հետևեալ կերպով է լինում. նախ յայտնւում է սրտի զարկը, յետոյ շնչառութիւնը, զգայութիւնը և վերջապէս իմացականութիւնը:

Ցուրտ ջուր.—եթէ կարելի սառոյցով գործ դնել: Սրսկում են դէմքը և կուրծքը առանձին ուշադրութեամբ, որ և է սրսկիչով, կամ ուժեղ կերպով թափելով ջուրը անօթից, որից յետոյ մորթին ցամաքեցնում են ցամքիչով և լաւ հարում են, որպէս զի նորից սրսկելիս մորթին ցամաք լինի: Ցուրտ ջրով լուանում են գլուխը, կուրծքը և մէջքը:

Արիւնառութիւն.—ընդհանրապէս ներկայումս գործադրւում է միայն լիարիւն մարդկանց, որոնց մահուան պատ-

ճառը լինում է արեան կանգնելը, սառչելը, օրինակ—կախուելիս, երբ դէմքը կապտում է, երբ աչքը լիքն է ջրով: Արիւն առնելիս պէտք է լայն շերտ ծակել (երակի մեծ խոցը):

Մորթին շփելը.—բրդեղէնով և կոշտ մազով և այլն, երակի հոսանքի ուղղութեամբ, օգնում է արիւնի շրջան անելուն և վերականգնում է ջերմութիւնը. բայց այս բոլորը պիտի կատարել զգուշաբար, որպէս զի ոչ մի տեղ մարմնի վրայ փոս չը մնայ և չը քերուի (эпителія): Չափաւոր շփումն պէտք է շարունակել արուեստական շնչառութիւն տալու ժամանակ, բայց ըստ Մարշալ-Գալլի, արիւնադարձը վերականգնացնելը асфиксія-ի ժամանակ նախքան ուշագնացի շնչառութեան ցոյցեր յայտնելը վնասակար է:

Հոտոտելու միջոցներ.—քացախ, օդէկոլօն, սպիրտի տեսակները, վառած փետրի ծուխը գործադրւում են ուշաթափութեան թեթև աստիճաններին և կեանքի կենդանութեան առաջին նշոյլները յայտնուելիս:

Մորթին գրգռելը.—մանանեխ և շփիչներ, ոտքերին տաք շշեր, դառնարմատ, տաքդեղ և այլն: Մի քանի դէպքերում լաւ են ստամոքսի համար աղով և ջրով ներքևից լուծողականներ (клистиръ):

Զարթեցուցիչ.—գինի, Հօֆմանեան կաթիլներ, spir. nitri aule, Aetheracet. և գործադրւում են, երբ երևում են կենդանութեան նշոյլներ:

Ընդհանուր կանոն.—երբէք չ'վհատել, թէ անկարելի է անյուսալի կեղծամահին յետ բերել կեանքի, թէև մի քանի ժամ անյաջող աշխատած էլ լինիք: Պատահել է, որ պատշած և սիստեմատիկական ու անշփոթ արուեստական շնչառութիւն և այլ միջոցներ գործադրելով, շատ կեղծամահները, որոնք կատարեալ ու վճռական մեռած էին համարւում, կեանքի են դարձնուել 6 կամ աւելի ժամերից յետոյ:

Ուրեմն այսպիսիներին չի կարելի թաղել, մինչև չը յայտնուեն մահուան անկասկածելի նշանները:



† ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ
Փետրվարի 18-ին Էջմիածնում 1889

## ՍՏՈՅԳ ՄԱՀՈՒԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Նեարդային համակարգութեան կատարեալ անզգայութիւն ցնցման ամեն մի դէպքում, (մինչև անգամ ամենախիստ ելեքտրական ցնցումը ոչինչ փոփոխութիւն չի յառաջացնում реакція): Ճնչառութեան բացակայութիւն.—մոմի բոցը և բերանի մօտի աղուամազը չեն տատանւում, հայելու սառն ապակին բերանի մօտ չի գոլորշացնում: Սիրտը անշարժ է (նաև ստետոսկոպ գործիքի տակ). բաժակով կամ ափսէյով կրծքին դրած ջուրը չի տատանւում: Մկանունքները—նամանաւանդ դիւրաթեք տեղերը, 2—3 ժամից յետոյ փետանում են և 12—24 ժամից յետոյ նորից թուլանում-կակղանում: Մեռնելուց 3 ժամից յետոյ, մկանունքները ելեքտրական մեքենայի (ընդհատուող) ազդեցութեամբ այլ ևս փոփոխութիւն չեն առաջացնում: Աչքերը անշարժ են, անտեսք, բբերը առանց վեր ու վար կամ կողմերը ուղղած: Ծածկուած կոպերի տակի եղջիւրաթաղանթը պղտոր է լինում (мутная) կամ կարծես (բաց կոպերի ժամանակ) թողոտ լինեն ցամաք և ճմլած. յետոյ աչքահիւթը երբեմն կնճռոտ է, մատը դնելուց տեղը փոս է մնում, երբեմն ինքն իրան է փոս ընկնում և հարթանում: Բիբը չի նեղանում լոյսից և կալաբարից, չի լայնանում մթնից և ատրոպինից: Աչքապտղի խնձորը դիակի (Լարժէի ցուցմունքից), երբ դիակացումը դեռ նոր է արտայայտւում, կամ անցնում է արդէն և երբ լուծուելու երևոյթները նոր են յայտնւում, պտղի եզրին նկատւում է սևագոյն պոյտ, սկզբում թոյլ ներկած, բայց սակաւ առ սակաւ աւելի սևանում է: Այդ կլոր ու լայն, երբեմն եռանկիւնի նոսր դծաւուն պոյտը սկզբում երևում է աչքապտղի արտաքին կողմի վրայ, իսկ յետոյ երևում է այլ և աչքի ներքին արտևանունքի տակից մօտ: Աչքի յատակի անօթներում արեան շերտը կտրւում է գազերից դատարկ միջանցքներով: Վառած մոմը չի առաջացնում բոցի երեք կերպ ցոլացում-



ների ոչ մինը (աչքահիւթից, բիւրեղից, առաջևի և յետևի մակերևոյթներից): Ծալած մատները, ձեռքերը և ականջը չեն թափանցեցնում բոլորովին, թափանցառանցքներում յետևից մօտեցրած մոմից: Մարմնի որ և է մասը կապելիս պարանով (ըստ Դրուէի), կամ մատները և ականջի ստորին ղրղջուկը թելով (ըստ Մագնուսի) կապուածից ցած՝ ոչ մի փոփոխութիւն չի երևացնում թէ գոյնով և թէ ծաւալով, մինչև իսկ 10 ժամերի ընթացքում (այն ինչ կենդանութեան ժամանակ ուռչում է, կարմրում և կապտում: Թելի տեղը մնում է լրջացած): Ելեքտրականութիւնը մահից 3 ժամ յետոյ փոփոխութիւն չի առաջացնում, այն ինչ կեղծամահին յայտնւում է:

Մորթին այրելիս, փամփուշտ է առաջացնում, բայց առանց փոփոխման, առանց կարմիր և նրա մօտ բորբոքուող պսակի: Մոմի բոցը փամփուշտ է առաջացնում միայն ոչ ջրոտ, այլ գոլորշոտ, որ իսկոյն տրաքւում են, սպիտակ յատակով, այլ ոչ ցից սպընգացած և կարմիր յատակով: Լաւ չղկած պողպատի ասեղը, մկանունքը խրելիս, օրինակ ուսը, կողքը և մի օր ու գիշեր մնալուց յետոյ դարձեալ պսպղուն է մնում, այն ինչ կենդանի մկանունքի մէջ մի քանի ժամում թթւում և կորցնում է փայլը: Կտրած ներքին անօթներից, զարկերակից, և այլ երակներից արիւն չի դուրս գալիս: Մարմնի ջերմութիւնը Ցէլ. 20° պակաս է (ըստ Դիվէրժէի) 27°: Իսկ եթէ բարձր է, ապա մահը կասկածաւոր է:

Բայց չը պէտք է մոռանալ, որ մահուան իսկ լինելը որոշելու համար ջերմութիւնը պէտք է չափել (perrectum): Յայտնի են մի քանի հարբեցողների կենդանանալու դէպքեր Ցէլ. 20°-ի (ըստ Րէյինկէի) և 24,4° (ըստ Ճէտրիւկի, in recto):

Մահուան անկասկած և ճշգրիտ նշանները սրանք են. նոր սկսուող լուծումը, դիահոտը, ուռած երակները (փայտագոյն շերտերը կանաչաձև կամ կապտաձև). դիակի կապտագորշագոյն պոյտերը մարմնի այն մասերի մօտ՝ որոնց վրայ պառկած է դիակը, բերանից, քթից դուրս եկող դեղնաջուրը, փորի ուռուցը:

# ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

---

Էդիսոն ամերիկեցին ներկայ ժամանակիս ամենաառաջին հնարագէտներից մէկն է, ունի մօտ 70 տեսակ զանազան գիւտեր: Վերջին ժամանակներում նա հնարել է մի գործիք՝ որի օգնութեամբ հարիւր մղոն հեռու գտնուող առարկաները կարելի է տեսնել. Էդիսոնը մտադիր է իւր գիւտերի այս հրաշալիքը պատրաստել մինչև եկող 1892 թ. Նիւ-Եօրկում կայանելիք համաշխարհային ցուցահանդէսին:

---

Լօնդօնում մի փաստաբան 5000 ր. է կտակել գժանոց շինելու համար, հետևեալ խօսքերով. «Այդ գումարը իմ հայրենի քաղաքս կը ստանայ գժանոց շինելու համար, որովհետև ես այդ գումարը վաստակել եմ գժերից, որոնց պէտք է հօ՛ մի բանով երախտահատոյց լինեմ»:

---

Դօկտոր Կիրշի կարծիքով, եթէ մարդը 10 տարով մեծ է կնոջից և վերջինը աւելի հասակն առած է (22—26 տարում), ծնւում են աւելի տղերք (արու). այդպէս էլ լինում է, եթէ կինն էլ հասակով մեծ է մարդուց 6—10 տարով: Եթէ երկուսը միասին մի հասակի են՝ ծնւում են աւելի աղջիկներ (էգ):

---

Մխալթ գիւղում 1889 թուին յունիսի 27-ին պատահեց հետևեալ ցաւալի դէպքը: Մէկ մարդ ճանապարհից բեզարած, մտել էր այգին որ հանգստանայ. Նա պառկում է կանաչ խոտերի վրայ և քնում: Քնած միջոցին մի ահագին բաւականին



հաստ և մոխրագոյն օձ մտնում է այդ՛ ողորմելու բերանը: Մարդն արթնանում է և սկսում է բերանից դուրս քաշել օձը, բայց ոչ մի կերպ չէ կարողանում: Օձը իւր պոչը փաթաթում է մարդու ձեռքին: Մարդը չէ կարողանում ձայն ծպտուն հանել, որովհետև ահագին օձը հազիւ տեղաւորուել էր մարդու կոկորդի մէջ: Խեղճն այդ դրութեան մէջ դուրս է վազում դէպի խանութները, որպէս զի մարդիկ տեսնեն և օգնեն: Գիւղացիները տեսնելով այդ սարսափում են և օգնութեան հասնում, նրանք բռնում օձի պոչից որ դուրս քաշեն, բայց չէ լինում: Բերանում թոկ են կապում օձի մէջքից, քաշում են, բայց թոկը կտրւում է և օձին ոչինչ չէ լինում: Մարդն ընկնում է և չարաչար տանջուելով մեռնում, որից յետոյ անմիջապէս սկսում է ուռչել և սևանալ: Ես հասայ, ասում է «Նոր-Դար»-ի թղթակիցը, այն ժամանակ, երբ մարդն արդէն մեռել էր: Օձը իւր պոչը մարդու ձեռքին ամուր փաթաթած ունէր: Սրով կտրեցին օձը մէջից, կէսը մնաց կոկորդում դուցէ և կրծքում, իսկ կէսը երկու ժամից աւելի շարժւում էր, բայց չիմացուեցաւ, թէ ո՛վ էր կամ ո՛րտեղացի էր խեղճ մարդը:

---

Թէև մարդու բերանը օձ մտնելու դէպքեր շատ չեն պատահում Անդրկովկասում, բայց և այնպէս պատահել են այդպիսի դէպքեր և, Тифлис. Лист-ի ասելով, յիշեալ միջոցը միշտ օգուտ է բերած: Հարկաւոր է վեր առնել ռուսական հասարակ ծխախոտ (մախորկա) և եռացող ջրի մէջ թուրմ պատրաստել (նաստոյկայ) և ածել օձ մտած բերանը. կարճ միջոցում օձը սատկում է և կամ այնքան թուլանում է որ առանց ոչ և է ցաւ պատճառելու կարելի է օձը դուրս քաշել:

Մեր ծանօթներից ևս մի մարդ հաւատացնում է, որ եթէ օձի պոչը դաղէին կրակով, կամ թէ եռացրած կաթի մէջ կոխէին՝ իսկոյն օձը ինքն իրեն դուրս կը գար բերանից:

---

Զանազան առարկաների շարժման համեմատաբար արագութիւնը: Կրիան մի վայրկեանում անցնում է 0,00015 մետր տարածութիւն, մարդու քայլը 425 մետր, դանդաղ քայլը 2,95 մ. սրնթաց գետը 4 մ. օդապարիկը խաղաղ եղանակին 6,4, ճեպագնացը 7,1, ճանճը 7,6, մ. սրնթաց շոգենաւը 8,5 մ. վելօսիպեդը 9,7 մ., հովասուն քամին 10 մ. սամուսը 11,5 մ. սառցի վերայ սահնակով սահողը 11,5 մ. լեռնային ուղխը 14,3 մ. երկար ճեպագնացը 16,7 մ. ովկիանոսի ալիքը 218 մ. պոստային աղաւնին 27 մ. փոթորիկ 45 մ. ծիծեռնակ 67 մ. ամենազօրեղ մրրիկ —ցիկլօնը 116, մ. ձայնը օդի մէջ 337 մ. երկրիս միջօրէական կէտը 563 մ. թնդանօթի ռումբը 500 մ.:

---

Մի վայրկեանում լուսին անցնում է 1 կիլօմետր, արևը 7,6 կ., սիրիուսը 15,4 կ., երկիրը 29,5 կ., ընկնող աստղը 40 կ., ալեկոծութիւն արևի տակ 402 կ., անդրովկիանական հեռագրական հոսանքը 4000 կ., հեռագր. հոսանքը 11,69 կ., էլեքտրական հոսանքը 36000, լէյդինեան անօթի հոսանքը 1,7 միլիմետր հաստութեամբ պղնձէ թելով, մի րոպէում անցնում է 463500 կիլօմետր:

---

Յայտնի Ջիւլին քառասուն օր Լօնդօնում ծոմ պահելուց յետոյ, պատրաստւում է եղել Նիւ-Եօրկում ևս 50 օր ծոմ պահելու:

---

Աշխարհիս երեսին ամենից աւելի խօսում են չինարէն մօտ 400,000,000 հոգի, յետոյ խօսում են հնդկերէն 100,000,000 հոգուց աւելի, յետոյ անգլիերէն մօտ 100,000,000, գերմաներէն 65 միլ., սպանիերէն 50 միլիօն, ռուսերէն և ֆրանսերէն, 45 միլ., իտալիերէն 27 միլ. և պօրտուգալերէն 5 միլիոն:

---

# ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամէն պատանի 16 տարին լրանալուց յետոյ և ոչ ուշ դեկտեմբերի 31-ին այն տարուայ, երբ նորան քսան տարին կը լրանայ, պարտաւոր է գրուել և ստանալ վկայական, որ նա գրուած է զինուորական ծառայութեան մէջ: Զինուորական ծառայութեան գրուելու համար պէտք է յայտարարութիւն տալ այն զինուորական վարչութեան, որին պատկանում է ինքն համաձայն իւր բնակութեան տեղի, ուր ինքն է ապրում, նորա հետ պէտք է ներկայացնէ 1) մետրիկական վկայական, 2) որտեղ է բնակվում նորա վկայականը, 3) ուսման վկայական և 4) իւր ընտանիքի դրութեան մասին ծանօթութիւն:

Ով որ զինուորական ծառայութեան գրուելու հասակից կ'անցնի և երբ նորա հասակակիցների վիճակահանութիւնը կ'սկսուի, չի տեղեկացնի զինւորական վարչութեան, նորան առանց վիճակահանութեան կ'ենթարկեն զինուորական ծառայութեան:

Ով որ կամենում է որ ժամանակ տան ուսումն աւարտելու, նա զինուորական վարչութեան պէտք է ներկայացնէ յայտարարութիւն և ուսումնարանի վարչութիւնից ուսումն շարունակելու վկայական:

Զինուորական ծառայութիւնից ազատւում են այն անձինք, որոնք մարմնի կազմուածքի պակասութիւն ունին կամ այնպիսի հիւանդութիւն, որ խանգարում է զինուորական ծառայութեան ենթարկուելու: Զինուորական ծառայութեան մէջ վերջնական մարմնի չափը ընդունուած է 2 արշին և $2^1/_2$ վերշոկ: Որոնք բաւարար չեն աճել և ունին այնպիսի հիւանդութիւն, որը բոլորովին չի ազատի զինուորական ծառայութիւնից կամ դեռ ևս ունին մարմնի թուլութիւն—առողջանալու համար նոցա տրւում է մի տարի ժամանակ: Եթէ միտարուց յետոյ նրանք դարձեալ թոյլ կը լինեն, նրանց կը նշանակեն ծառայութեան մէջ երկրորդ տարի, իսկ եթէ երկրորդ տարին էլ անպէտք կը ճանաչուին զինուորական ծառայութեան համար, նրանք ազատւում են ծառայութիւնից, որի համար և ստանում են վկայական:

Ընտանեկան դրութեան նկատմամբ սահմանուած է արտօնութիւններ երեք կարգի:

Առաջին կարգ: 1) Երբ միայն մի որդի է աշխատանքի ընդու-
նակ, որի հայրը աշխատանքի ընդունակ չէ կամ մայրը այրի է: 2)
Երբ աշխատանքի մի եղբայրն է միայն ընդունակ, որը ունի մի կամ
մի քանի որբ եղբայրներ և քոյրեր: 3) Երբ միայն մի թոռն է
աշխատանքի ընդունակ, որի պապը կամ տատը աշխատանքի ըն-
դունակ որդի չունին: 4) Երբ ընտանիքի մէջ միայն մի որդի է,
եթէ մինչև անգամ ունենայ աշխատանքի ընդունակ հայր և 5)
Երբ այօրինի ծնուած զաւակի հոգացողութեան ներքոյ է աշ-
խատանքի ընդունակ ուրիշ որդիք չունեցող մայրը կամ քոյրը,
կամ թէ աշխատանքի անընդունակ եղբայրը:

Երկրորդ կարգ: Երբ միայն մի որդի է աշխատանքի ընդու-
նակ, որի հայրը նոյնպէս աշխատանքի ընդունակ է, բայց որը
ունի մէկ կամ մի քանի աշխատանքի անընդունակ եղբայրներ,
որոնց տարիքը 18 տարուց ցածր է:

Երրորդ կարգ: Երբ պատանին տարիքով անմիջապէս հե-
տևում է այն եղբօրը, որը զինուորակոչով իսկական ծառայու-
թեան մէջ է գտնւում կամ զրուել է այդ ծառայութեան մէջ
և կամ անյայտ կերպով կորել է պատերազմում:

Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ համարւում են 18
տարեկանից մինչև յիսուն և հինգ տարեկան անձինք, բացի հե-
տևեալներից. 1) Նոքա, որոնք կատարելապէս անկարող են աշ-
խատել կազմութեամբ կամ հիւանդոտ լինելու պատճառով. 2) աք-
սորուածները. 3) երեք տարուց աւելի բացակայութեան մէջ եղող-
ները և 4) նոքա որոնք զինուորակոչով գտնւում են իբրև զինուոր
ցամաքային զօրքի կամ նաւատորմի իսկական ծառայութեան մէջ:

Օտար զաւակները, որոնք որդեգրւել են մինչև 10 տարեկան և
անհարազատ զաւակներ խորթ հօրը կամ խորթ մօրը զինուորական
ծառայութեան վերաբերմամբ համարւում են հարազատ որդիք:

Ընտանեկան դրութեան արտօնութիւնների իրաւունք ու-
նեցող անձինք ծառայութեան մէջ են նշանակւում միմիայն այն
դէպքում, երբ նորակոչ զօրքը լրացնելու համար բաւական չեն
լինի վիճակահանութեան կոչուած միւս մարդիկ:

Առաջին կամ երկրորդ կարգի արտօնութեան իրաւունք ու-
նեցող անձինք զրկւում են այդ իրաւունքից, եթէ հօր կամ մօր,
պապի կամ տատի ասելով ընտանիքի համար չեն հոգում:



ԿԱՐԻՆՈՒՀԻ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ

*անձանց յորոց ընտրեսցին ուսուցիչք և ուսուցչուհիք վասն եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց*

---

## ԴԱՍԱԿԱՐԳՔ ՈՒՍՈՒՑՉԱՑ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԵԱՑ

| | | |
|---|---|---|
| Ա. | ԴԱՍԱԿԱՐԳ. | Աւարտեալք ի Բարձրագոյն Ուսումնարանս։ |
| Բ. | » | Աւարտեալք ի մասնագիտական բաժնի Հոգևոր Ճեմարանի Ս. Էջմիածնի։ |
| Գ. | » | Աւարտեալք ի Թեմական Հոգևոր Դպրոցս Հայոց։ |
| Դ. | » | Ուսեալք ի Հոգևոր Դպրոցս Հայոց և ընկալեալք զվկայականս ուսուցչութեան յԱրքունի Դպրոցաց։ |
| Ե. | » | Ուսեալք յԱրքունի Դպրոցս և ընկալեալք զվկայականս ուսուցչութեան յԱրքունի Դպրոցաց։ |
| Զ. | » | Արտօնեալք ի Վեհափառ Հայրապետէ |
| Է. | » | Ընկալեալք զվկայականս Ջայնագրութեան։ |
| Ը. | » | Ուսեալք յՕրիորդական Հոգևոր Ուսումնարանս Հայոց։ |
| Թ. | » | Ուսեալք ի Հոգևոր Օրիորդական Ուսումնարանս Հայոց և աւարտեալք ի Միջնակարգ Դպրոցս Պետութեան։ |
| Ժ. | » | Աւարտեալք ի Միջնակարգ Օրիորդական Դպրոցս Պետութեան։ |
| ԺԱ. | » | Ընկալեալք զվկայականս Ձեռագործութեան։ |

---

*Ի սմին ցուցակագրեալ անձանց թոյլատրեմք վարել զպաշտօնս ուսուցչութեան յեկեղեցական—ծխական ուսումնարանս Հայոց։*

Ի 22 Մայիսի 1890 ամ.
*ի Ս. Էջմիածին։*

ԻՎԵՐԱՅ ԻՍԿԱԿԻՆ ՍՏՈՐԱԳՐԵԱԼ Է

**ՄԱԿԱՐ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՑՈՒՑԱԿ ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

### ՈՒՍՈՒՑԻՉՔ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՔ

Աբգարեան Ոսկան, է. Աբուլեան Գալուստ, գ։ Աբուլեան Յովսէփ, գ, Աբրահամեան Անդրէաս, գ. Աբրահամեան Խաչատուր, գ. Աբրահամեան Յարութիւն, գ. Ագաբեան Արշակ, գ։ Ադամանեան Բաղդասար, ե. Ադամեան Ադամ գ. Ազատեան Մարտիրոս գ. Ազատեան Սահակ գ. Աթաբէգեան Մկրտիչ դ. Աթոյեան Աւագ ե. Ահարոնեան Գէորգ բ. Աղաբալեան Սեդրակ գ. Աղանեան Գիւտ քհ. գ. Աղաջանեան Սարգիս Ա. քհ. գ. Աղբալեան Աւետիս գ. Աբեղեան Մանուկ բ. Ամիրխանեան Յովհաննէս գ. Ամիրաղեան Բաղդասար գ. Ամիրաղեան Յովսէփ քհ. գ. Այվազեան Գաբրիէլ ե. Այվազեան Յարութիւն գ. Ապրելեան Երուանդ գ. Առաքելեան (Յարութիւնեան) Կարապետ ե. Առաքելեան Կարապետ ե. Առաքելեան Միրզաջան գ. Ասլանեան Բաղդասար գ. Ասկարեան Վահան գ. Ասմարեան Խորէն ե. Աստուածատրեան Կարապետ գ. Աստուածատրեան Հայրապետ ե. Աստուածատրեան Սարգիս գ. Ատոմեան Թադէոս գ. Արաբաջեան Մկրտիչ գ. Արաբաջեան Յարութիւն ե. Արշակունի Ար-

չակ է. Արարատեան Յովսէփ ե. Արզումեան Յովսէփ (իշխան) գ. Աւագեան Գալուստ դպիր է. Ազատեան Յովհաննէս ե. Ամիրեան Գէորգ գ. Ամիրխանեան Յովհաննէս քհ. է. Արազեան Արշակ ե. Աբրահամեան Ստեփան ե. Ազիզեան Յովհաննէս գ. Ախոյեան Գէորգ քհ է. Ահարոնեան Նիկողայոս գ. Արաբաջեան Յովհաննէս ե. Արշակունի Ազարէկ » Արաբաջեան Եսթեր թ. Արաբաջեան Շուշանիկ ը. Աւշարեան Աննա ժա. Աբրահամեան Սրբուհի ը. Ադամեան Եւգինէ ժ. Աթոյեան Կատարինէ ժա. Ալիբէգեան Եղիսաբէթ ժ. Ալիբէգեան Մարիամ ժ. Ահարօնեան Սրբուհի ժա. Աղաջանեան Երանուհի ը. Աղաջանեան Երմոնէ ը. Աղաջանեան Մարիամ թ, Աղաախալեան Զարուհի ժ. Այվազեան Աննա ը. Այվազեան Մարիամ ժա. Անանեան Նունէ ը. Անտոնեան Մանիա ը. Առաքելեան Մատիլդա ը. Ասլամազեան Մարիամ ժ. Աստաբաթեան Անուշ ժա. Աստուածատրեան Աշխէն ը. Աստուածատրեան Մարիամ ը. Արարատեան Նունէ ը. Արեշատեան Հռիփսիմէ թ. Արէշեան Գարիա ժ. Արեշեան Թագուհի ը. Արէշեան Մարիամ ժա. Արէշեան Շողակաթ թ. Աւետիսեան Վարդանուշ ը. Աքոյեան Նունէ ը.

Բաբալեան Մովսէս ե. Բաբայեան Սիմէօն է. Բաբայեան Մեսրոպ քհ. գ. Բագրատունի Արսէն քհ. գ. Բաղդասարեան Աղէքսանդր քհ. գ. Բաղդասարեան Գրիգոր ե. Բաղդասարեան Աղէքսանդր (Յարութիւն) է. Բաղչինեան Աղէքսադր գ. Բաղրամեան Գրիգոր ե. Բաղրեան Գրիգոր գ. Բայբուրդեան Սրապիոն դպիր է. Բատիկեան Գէորգ գ. Բարսեղեան Խորէն Ա. քհ. գ. Բունիաթեան Առաքել բ. Բրդեան Արշակ է. Բալայեան Արսէն բ. Բաղդասարեան Մուրատ է. Բեննեան Մագդաղինէ ժ. Բաբայեան Կատարինէ ժ. Բաղդասարեան Հռիփսիմէ ը. Բաղչեան Մարիամ ը. Բէնքլեան Սաթինիկ թ. Բոստանճեան Մագթաղինէ ը. Բուզզանեան Նունէ ը. Բունիաթեան Կատարինէ ժ. Բունիաթեան Վարդուհի թ.:

Գաբրիէլեան Թադէոս գ. Գաբրիէլեան Ստեփանոս գ. Գալստեան Աստուածատուր գ. Գալստեան Արամ գ. Գալստեան Յովհաննէս գ. Գայֆէճեան Մկրտիչ քհ. գ. Գասպարեան Յովհաննէս գ. Գասպարեան Ստեփանոս գ. Գափամաճեան Եղիշէ քհ. գ. Գէորգեան Թադէոս գ. Գէօնջեան Ենովք բ. Գիւլմիրեան Հայկ գ. Գիւլումեան Մեսրոպ քհ. գ. Գրիգորեան Կարապետ ե. Գրիգորեան Նիկողայոս Ա. Գուլաբեան Յովհաննէս է. Գաբրիէլեան Թադէոս գ. Գեղամեան Աւետիս գ. Գալստեան Յովհաննէս գ. Գիւլումեան Զարուհի ը. Գօլօշեան Գարիա ժ: Գիւլնազարեան Տիրուհի ժ.:



Դալլաքեան Աստուածատուր բ. Դանդուրեան Ենովք ե. Դաւթեան Աւետիս ե. Դաւթեան Վահան գ. Դէմուրեան Արշակ դպիր. գ: Դիլանեան Խաչատուր գ. Դիւանեան Գէորգ գ. Դանազեօզեան Մելքոն գ. Դադաշեան Մարիանէ ժ. Դաւթեան Եղիսաբէթ ժ. Դէղուկեան Մարիամ ը. Դուլվէթեան Աննա ը. Դօլվաթեան Եղիսաբէթ ժ.:

Երալեան Գրիգոր գ. Երզնկեան Եղիշէ գ. Երիցեան Ղուկաս քհ. գ. Երնջակեան Աղէքսանդր գ. Եազուբեան Բագարատ գ.:

Զարդեղեան Բաղդասար սարկաւագ գ. Զազունեան Միքայէլ ե. Զալինեան Զաքարիա է. Զարգարեան Վաղարշակ գ. Զոհրաբեան Եղիա բ. Զախարբէգեան Արշակ ե. Զատիկեան Յովհաննէս գ. Զաւարեան Բարսեղ ե. Զազունեան Մարիամ ժ. Զոհրաբեան Սրբուհի ժ. Զոհրաբեան Վառվառէ ժ. Զոհրաբեան Վառվառէ ը.:

Թադէոսեան Քրիստափոր ե. Թաղախճեան Յարութիւն ե. Թառումեան Գրիգոր գ. Թարխանեան Աղէքսանդր ե. Թեմուրազեան Աշոտ քհ. գ. Թորոսեան Յովհաննէս գ. Թումանեան Գալուստ ե. Թումանեան Մովսէս գ: Թամբեան Գրիգոր գ. Թադէոսեան Վարդուհի թ. Թաղվէրեան Գայիանէ ը. Թայիրեան Եղիսաբէթ ժա. Թայիրեան Նունէ ը. Թարխանեան Սրբուհի ժ. Թումանեան Մարիամ ժ.:

Ժամակոչեան Մանուկ է. Ժամակոչեան Վաղարշակ գ.

Իլխալեան Առաքել դպիր ե. Իշխանեան Զաւատ գ. Իսահակեան Գէորգ գ. Իսահակեան Իսահակ քհ. գ: Իւսուֆեան Յովհաննէս գ. Իսահակեան Մարգարիտ ժա.

Լազարեան Աղէքսադր գ. Լազարեան Երուանդ գ. Լազարեան Սարրա թ. Լազարեան Վառվառէ ը. Լիսիցեան-Ախաշեան Կատարինէ ժ. Լորիս-Մելիքեան Աննա ժ.:

Խաժակնեան Գարեգին գ. Խալաթեան Գրիգոր գ. Խախանեան Սահակ քհ. գ. Խան—Ազեան Սարգիս բ. Խանզադեան Խորէն քհ. գ. Խաչատրեան Գեղամ ե. Խաչատրեան Սամսոն է. Խաչումեան Յովհաննէս բ: Խարմանեան Գէորգ գ. Խերոզինեան Յակոբ գ. Խիթա-

րեան Գրիգոր գ. Խօջամիրեան Յակոբ գ. Խօջայէնիաթեան Գրիգոր քհ. գ. Խաչատրեան Գարեգին քհ. է. Խուբլարեան Մինաս ե. Խազէզեան Տիրուհի ժ. Խան-Անուշեան Մաքրուհի ը. Խաչատրեան Սոփիա ժա. Խարազեան Աննա ը. Խիթանեան Անաստասիա ժ. Խիթարեան Վառվառէ ժ. Խուդադեան Գայիանէ թ. Խուդադեան Նունէ ժ. Խօջամիրեան Սրբուհի ը. Խօջայեան Հեղինէ ժ.։

Կանայեան Սմբատ գ. Կանցեան Մեսրոպ քհ. է. Կարապետեան Արշակ գ. Կուզանեան Գէորգ ե. Կոսիկեան Յովհաննէս գ, Կիւրեղեան Գրիգոր ե. Կարճիկեան Վառվառէ ժ. Կրասիլնիկեան Ոսկի ժ.

Հախնազարեան Մարտիրոս բ. Համազասպեան Գրիգոր է. Համբարձումեան Ներսէս քհ. գ. Համբարձումեան Վաղարշակ գ. Հովուեան Պօղոս (Պետրոս) բ. Հալաճեան Մելքիսեդէկ է. Հալապեան Պօղոս ա. Համբարձումեան Համբարձում դպիր բ. Հովուեան Սիմէոն բ. Համասփիւռեան Պօղոս ե. Հասան-Ջալալեան Պօղոս ե. Հէջուբեան Արուսեակ ը.

Ղազալեան Աբրահամ քհ. գ. Ղազարեան Երուանդ գ. Ղազարեան Մկրտիչ բ. Ղազարոսեան Մկրտիչ գ. Ղամարեան Խաչատուր գ. Ղարագեօզեան Յարութիւն գ. Ղարաջեան Գէորգ գ. Ղօրղանեան Խորէն քհ. գ. Ղուլիքեխայեան Գաբրիէլ գ. Ղուլիքեխայեան Սարգիս բ. Ղուկասեան Հայրապետ գ. Ղազարեան Կոստանդին ե. Ղլղճեան Սիմէոն գ. Ղազարեան Ֆլօրէնցիա ժ. Ղալումեան Նունէ ը. Ղայթմազեան Շուշան ժ. Ղոնեան Կատարինէ ը. Ղուբալեան Մարիամ ը. Ղուլիջանեան Վառվառէ ը.

Ճաղարբէգեան Յակոբ գ. Ճաճիկեան Մելքոն գ, Ճգնաւորեան Լեւոն ե. Ճուղուրեան Յարութիւն գ,

Մաժինեան Հմայեակ գ, Մալխասեան Կարապետ գ. Մալխասեան Յովհաննէս գ. Մալխասեան Ստեփան ա. Մամեան Ստեփանոս գ. Մամիկոնեան Վահան քհ. է. Մանասեան Գէորգ գ. Մանուչարեան Արշակ գ. Մանուչարեան Նիկողայոս գ. Մառանկոզեան Խաչատուր ե. Մառանեան Սեդրակ գ. Մատթէոսեան Բագարատ գ. Մատինեան Արտաշէս գ. Մատինեան Գրիգորիս քահանայ գ. Մարաղեան Յ. գ. Մարգարեան Մարտիրոս ե. Մարգարեան Մինաս գ. Մարջանեան Աղէքսանդր ե. Մարտիրոսեան Յովհաննէս քահանայ գ. Մելեան Յովսէփ աւագ քահանայ գ. Մելիք Բաբախանեան Անդրէաս գ. Մելիք-Գէորգեան Գէորգ դպիր գ. Մելիք-Թանգեան Նիկողայոս բ. Մելիքեան Բաղդասար գ. Մելիքեան Ներսէս դ. Մէլիք-Շահնազարեան Սողոմոն բ. Մելիք-Փարսադանեան Նապի ե. Մելքումեան Պետրոս ե. Մեհրաբեան Մեհրաբ է. Մեհրաբեան Յարութիւն գ. Մեհրաբեան Սմբատ գ. Մինասեան Արշակ գ. Միրաղեան Գեդէօն ե. Միրաքեան Անդրէաս ե. Միրիմանեան Կոստանդին գ. Միքայէլեան Գէորգ գ. Միքայէլեան Քրիստափոր ե. Մխիթարեան Արշալոյս գ. Մկրտումեան Գէորգ քահանայ գ. Մնացականեան Մարգար գ. Մոլախալցեան Պօղոս ե. Մուսաբէգեան Յովհաննէս բ. Մուրատեան Գէորգ գ. Մուրատեան Յակոբ (Բագարատ) գ. Մուրատեան Ղուկաս գ. Մատթէոսեան Մատթէոս գ. Մելիք-Նազարեան Ղազար գ. Միրիմանեան Յարութիւն գ. Մխիթարեան Սիմէոն բ. Մնացականեան Միքայէլ ե. Մուշեղեան Հմայեակ ե. Մամիկոնեան Մուշեղ է. Մելեան Արամ գ. Միրզաբէգեան Յովհաննէս գ. Մաթոյեան Փառանձեմ ժա. Մալխասեան Հեղինէ ժա. Մալումեան Մարիամ ժ. Մակարեան Մարիամ ը. Մամիկոնեան Թագուհի ը. Մամիկոնեան Շուշանիկ ը. Մանուչարեան Եղիսաբէթ ժ. Մասսեան Մարիամ ժ. Մատինեան Սաթինիկ ժ. Մարաղեան Մարիամ ը. Մարգարեան Մարգարիտ ը. Մարկոսեան Հեղինէ ժ. Մարկոսեան Մարիամ ժ. Մարտիրոսեան Պեղեգեա ը. Մեսանիկեան Հռիփսիմէ ժ. Մելեան Զարուհի ը. Մելիք-Ազամալեան Կատարինէ ժ. Մելիք-Սարգսեան Կատարինէ ը. Մելիքեան Մարիամ ժ. Մելիքեան Նունէ ժ. Միանսարեան Նազանի ժ. Մինասեան Սոփիա թ. Մկրտումեան Սոփիա ը. Մնացականեան Վառվառէ ը. Մուշեղեան Սաթինիկ ժա. Մուրատեան Կատարինէ թ.։



Յակոբեան Արամ ե. Յակոբեան Գարսեան գ. Յակոբեան Հմայեակ գ. Յակոբեան Յարութիւն դպիր է. Յակոբեան Վարդան է. Յարութիւնեան Բարդուղիմէոս ե. Յարութիւնեան Գրիգոր գ. Յարութեան Դաւիթ բ. Յարութիւնեան Սարիբէգ գ. Յովհաննիսեան Գարեգին քահանայ է. Յովհաննիսեան Յովհաննէս գ. Յովհաննիսեան Ստեփան ե. Յովհաննիսեան Ստեփաննոս է. Յովսէփեան Ղազար քահանայ է. Յարութիւնեան Իսահակ գ. Յովհաննիսեան Պատուական գ. Յարութիւնեան Հայկանոյշ թ. Յովհաննիսեան Մարգարիտ ժ. Յակոբեան Աղնիւ ը. Յովհաննիսեան Կատարինէ ը. Յովհանիսեան Հռիփսիմէ ը. Յովհաննիսեան Մարիամ ը. Յովհանջանեան Հայկուհի ը. Յովհանջանեան Հեղինէ ը.։

Նազարեան Յովհաննէս սարկաւագ գ. Նազարեան Յովհաննէս ե. Նալբանդեան Արիստակէս քահանայ գ. Նալբանդեան Վախթանգ գ. Նազիրեան Արշակ գ. Նիկողոսեան Համբարձում գ. Նոհրատեան Համազասպ գ. Նաւասարդեան Մկրտիչ գ. Նազարբէգեան Վառվառէ ը. Նազարեան Փեփրոնէ ը. Նաւասարդեան Մարիամ ժ. Նուրինեան Մարթա ը.։

Շալամեան Միքայէլ դպիր գ. Շախեան Յարութիւն է. Շահազիզեան Սմբատ է. Շահբազեան Յովհաննէս գ. Շահբուդաղեան Գրիգոր գ. Շահինեան Գէորգ ե. Շահիջանեան Աբրահամ բ. Շահնազարեան Գրիգոր քահանայ գ. Շաւարշեան Աղէքսանդր է. Շահպարոնեան Յովհաննէս ե. Շահսուվարեան Աւետիս դպիր է. Շահվերդեան Սիմէօն ե. Շերմազանեան Գրիգոր քահ. գ. Շխինեան Աբրահամ քհ. Շոլկովնիկեան Վարդան ե. Շահանեան Սիմէօն գ. Շաթիրեան Մարտիրոս ե. Շալամեան Գաւիթ ե. Շահինեան Խորէն քհ. է. Շամչինեան Յարութիւն է. Շահբազեան Սմբատանոյշ ը. Շահիկեան Մարիամ թ. Շահնազարեան Եղիսաբէթ ժա. Շահնազարեան Հեղինէ թ. Շահվերդեան Աննա ը. Շամքորեան Շուշանիկ ը. Շամքորեան Վիրգինէ թ. Շէկ-Յովսէփեան Սօֆիա ը.։

Չիգիանեան Նիկողայոս գ, Չիլինկարեան Արշակ գ. Չիլինկարեան Խաչատուր բ. Չօբանեան Արշակ գ. Չարխեան Մարիամ ժ. Չօբանեան Մարիամ ժ..

Պալեան Գրիգոր. ե. Պահլաւունի Ղազարոս քահանայ. է. Պանճուլաղեան Մինաս գ. Պետրոսեան Աղէքսանդր գ. Պօղոսեան Ռուբէն գ. Պօպովեան Դիմիտրի ե. Պօպովեան Մկրտիչ » Պաչկեւիչ (Բանանեան) Մարթա ժ. Պապասինեան Քրիստինէ ժ. Պատկանեան Եղիսաբէթ ժ. Պետրոսեան Խոզարեր ը. Պետրոսեան Շողակաթ ը. Պետրոսեան Սոփիա թ.։

Ջալալեան Կարապետ. գ. Ջանիբէգեան Սեդրակ. է. Ջանումեան Յովսէփ. գ. Ջանեան Գայիանէ. ը. Ջանջուղազեան Աննա. ժ.։

Ռափայէլեան Վարդուհի ժա. -

Սահակեան Միքայէլ դպիր. գ. Սահակեան Պօղոս. գ. Սահակեան Սահակ քահանայ. գ. Սարգսեան Լևոն. ա. Սեդմանեան Պետրոս. ե.



Սէֆէրեան Տիգրան, բ. Սիմէօնեան Աղէքսանդր. գ. Սիմէօնեան Ներսէս. գ. Սմբատեան Սմբատ. գ. Սողոմոնեան Բագարատ. գ. Սողոմոնեան Գրիգոր գ. Սուսանեան Եղիա գ. Սուքիասեան Աբէլ քահ. գ. Սուքիասեան Բագարատ դպիր է. Սպարապետեան Աստուածատուր գ. Ստեփանեան Ջոհրաբ գ. Սահակեան Սահակ գ. Սարգսեան Մկրտիչ ե։ Սոբոլեան Կարապետ ա. Սոլովեան Յովակիմ ե. Սաֆարեան Վարդան է. Սուքիասեան Գէորգ գ. Սալամբէգեան Մարիամ ժ. Սահակեան Աննա թ. Սահակեան Դարիա ժա. Սանթրուսեան Վառվառէ ժա. Սառաջեան Նունէ ժ. Սարդարեան Մարիամ ժ. Սէյլանեան Թագուհի ը. Սկանդարեան Նատալիա ը. Սողալեան Նունէ ը. Սողինեան Զարուհի ը. Սողոմոնեան Եւպրաքսէ ժա. Սողոմոնեան Հեղինէ ը. Սուղանաճեան Կատարինէ ը. Սուսանեան Աննա թ. Սուսանեան Սրբուհի ժ. Ստամբօլցեան Գայիանէ ը. Ստեփանեան Թեկղի թ. Ստեփոյեան Եղիսաբէթ ը. Ստեփոյեան Շուշանիկ ը.։

Վանցեան Պօղոս գ. Վաչեան Աւետիս գ. Վաչէյեան Վահան քահանայ գ. Վարդանեան Աղէքսանդր գ. Վարդանեան Արշաւիր գ. Վարդանեան Գրիգոր ե. Վարդանեան Երանոս գ. Վարդանեան Պապ բ. Վարդանեան Փիլիպոս ա. Վարդիկեան Մակար է. Վերանեան Տիգրան գ. Վիրապեան Իգնատիոս ե. Վախրամեան Մարիամ ժա. Վանցեան Գրիգոր գ. Վլասեան Կարապետ քահ. է. Վախթանգեան Մարիամ ժա. Վարազեան Մարիամ ժ. Վարդանեան Մարիամ ժ.։

Տարխէլեան Միքայէլ դպիր. գ. Տէր-Աստուածատրեան Նիկողայոս. է. Տէր-Աւետիքեան Համազասպ քահանայ. գ. Տէր-Գրիգորեան Անտոն. բ. Տէր Գրիգորեան Մկրտիչ քահանայ. գ. Տէր-Գրիգորեան Մատաթ. գ. Տէր-Գրիգորեան Սահակ. ե. Տէր-Գրիգորեան Սարգիս. գ. Տէր-Գրիգորեան Վահան քահանայ. գ. Տէր-Դաւթեան Խորէն քահանայ գ. Տէր-Եղիազարեան Նիկողայոս. գ. Տէր-Եսայեան Աղէքսանդր. գ. Տէր-Զաքարեան Կոստանդին. ե. Տէր-Իսահակեան Իսահակ. ե. Տէր-Խաչատրեան Արշամ. գ. Տէր-Խաչատրեան Կոստանդին. գ. Տէր-Կարապետեան Պօղոս. է. Տէր-Հայրապետեան Խաչատուր. է. Տէր-Ղևոնդեան Գէորգ. գ. Տէր-Մաթէոսեան Անուշաւան. ե. Տէր-Մարկոսեան Սարգիս։ է. Տէր-Մարտիրոսեան Յակոբ. գ. Տէր-Մարտիրոսեան Միքայէլ. գ. Տէր-Մարտիրոսեան Մկրտիչ. գ. Տէր-Մարտիրոսեան Տիգրան. գ. Տէր-Մինասեան Մինաս. է. Տէր-Մինասեան Սահակ քահանայ. է. Տէր-Միքայէլեան Ստեփանոս. գ. Տէր-



ԹԻՖԼԻԶՑԻ ՀԱՅ



Մկրտչեան Մկրտիչ քահանայ զ. Տէր-Մկրտչեան Յարութիւն գ. Տէր-Յակոբեան Կարապետ դպիր է. Տէր-Յակոբեան Տիգրան բ. Տէր-Յարութիւնեան Միքայէլ դպիր է. Տէր-Յարութիւնեան Նիկողայոս (Յարոյ) գ. Տէր Յովակիմեան Կարապետ սարկաւագ է. Տէր-Յովհաննիսեան Մարտիրոս գ. Տէր-Յովհաննիսեան Պետրոս գ. Տէր-Յովսէփեան Մկրտիչ քահանայ զ. Տէր-Պետրոսեան Մինաս քահանայ զ. Տէր-Պետրոսեան Յովսէփ գ, Տէր-Պետրոսեան Ներսէս քահանայ գ. Տէր-Պօղոսեան Պօղոս բ. Տէր-Սահակեան Սարգիս քահանայ է. Տէր-Սահակեան Բագարատ գ. Տէր-Սահակեան Եղիշէ քահանայ գ. Տէր-Սահակեան Ստեփաննոս քահանայ է. Տէր-Սարգսեան Մակար գ. Տէր-Սարգսեան Ստեփաննոս ե. Տէր-Սիմէօնեան Արսէն աւագ քահանայ գ. Տէր-Ստեփանեան Յովհաննէս ե. Տէր-Ստեփանեան Սարգիս Աւագ-քահանայ գ. Տէր-Ստեփանոսեան Միքայէլ ե. Տիգրանեան Կարապետ ե. Տօնականեան Տիգրան է. Տէր-Դաւթեան Դաւիթ գ. Տէր-Կարապետեան Լեոն գ. Տէր-Կարապետեան Սեդրակ գ. Տէր-Մանուէլեան Թադէոս դպիր գ. Տէր-Մինասեան Գէդէոն գ. Տէր-Մկրտչեան Ստեփանոս բ. Տէր-Յովհաննիսեան Գրիգոր գ. Տէր-Յովհաննիսեան Տիգրան բ. Տիգրանեան Լեոն ա. Տէր-Համբարձումեան Նունէ ը. Տէր-Յովհաննիսեան Մարիամ ը. Տէր-Ստեփանեան Մարիամ Թ. Տէր-Գէորգեան Խաչատուր քահանայ զ. Տէր-Գրիգորեան Համբարձում ե. Տէր-Խաչատրեան Արմենակ գ. Տէր-Խաչատրեան Արշակ գ. Տէր-Մարտիրոսեան Սեդրակ քահանայ է. Տէր-Յակոբեան Արմենակ ե. Տէր-Պետրոսեան Հայրապետ գ. Տէր-Վարդանեան Ներսէս է. Տէր-Անտոնեան Աշխէն ը. Տէր Աստուածատրեան Նունէ ը. Տէր-Աստուածատրեան Փեփրոնէ Թ. Տէր-Իսահակեան Բրաբիոն Ժ. Տէր-Խաչատրեան Գայանէ Ժա. Տէր-Ղեոնդեան Նատալիա ը. Տէր-Մարուքեան Եղիսաբէթ Ժ. Տէր-Մարուքեան Մարիամ Ժ. Տէր-Մարտիրոսեան Համասփիւռ ը. Տէր-Մարտիրոսեան Նատալիա Ժ. Տէր-Մկրտչեան Հռիփսիմէ Ժա. Տէր-Մովսիսեան Եղիսաբէթ Ժ. Տէր-Յովակիմեան Վարդուհի Ժ. Տէր Յովսէփեան Շուշանիկ Ժ. Տէր-Յովսէփեան Սաթինիկ Ժ. Տէր-Պետրոսեան Եղիսաբէթ Ժա. Տէր-Պետրոսեան Նուարդ ը. Տէր-Սարգսեան Աննա ը. Տէր-Սարգսեան Աշխէն ը. Տէր-Ստեփանեան Եղիսաբէթ Ժա. Տօնականեան Շամունէ ը.

Փանեան Խաչատուր գ. Փիրկեան Զաքարեա գ. Փիրումեան Տիգրան գ. Տոթէեան Սարգիս գ. Փորսուղեան Արշակ գ. Փինջանեան





Քրիստափոր ե. Փիլիպպոսեան Նոյեմզար ը. Փանեան Մարիամ ը. Փարսաղանեան Մարիամ ժ. Փուզինեան Աննա ժ. Փուզինեան Հռիփսիմէ ժ. Փրիզոնեան Նունէ ժ.։

Քաթանեան Քաթան ե. Քալանթարեան Յակոբ գ. Քամալեան Սարգիս գ. Քաջազնունի Յովհաննէս քահ. գ. Քարամեան Նիկողայոս գ. Քացախեան Մինաս ե. Քեանդարեան Յովհաննէս գ. Քութալիսեան Զաքարիա դ. Քօթանջեան Սարգիս է. Քօչարեան Կարապետ է. Քանանեան Յակոբ գ. Քարտաշեան Արշակ ե. Քուշմանեան Պատուական բ. Քալանթարեան Նատալիա ժ. Քաթանեան Աղէքսանդր գ. Քալանթարեան Անուշաւան ե. Քալանթարեան Գայեանէ ժ. Քամալեան Աննա ը. Քեանդարեան Կատարինէ ը.։

Օրբելեան Համազասպ ե. Օհանեան Աստղիկ ժ. Օհանեան Նատալիա թ. Օտեան Սոֆիա. թ.։

Ֆօլեաճեան Սաթինիկ թ.։

# ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Քաղքի ազատ (մի մասը միայն) տպ. 1869 թ. . 5 կ.
2) «Ծոցի» օրացոյց 1888 թ. . . . . . . 5 »
3) — — 1889 » . . . . . . 5 »
4) — — 1890 » . . . . . . 5 »
5) — — 1891 » . . . . . . 5 »
6) — — 1892 » . . . . . . 15 »
7) Պատկերազարդ 1889 » . . . . . . 20 »
8) — — 1891 » . . . . . . 20 »
9) — — 1892 » . . . . . . 25 »
10) «Կենդանի թաղուած մեռած-կարծեցեալների մասին». . . . . . . . . . . . . . 3 »
11) «Աստղալից երկինքը և երկրագունդը». . . 5 »

## ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

12) «Սահակ Պարթև» (կենսագրութիւն)։
13) «Ժողովրդական հնարքներ և դարմաններ»։
14) «Քրիստոնէի արիւնը հրեայք գործ են ածում թէ ոչ»։
15) «Ազատութեան կրակը կամ Ս. Կարապետի ուխտը»։

Գնել ցանկացողները կարող են դիմել մեր գրավաճառանոցը Թիֆլիսում կամ ուղղակի ինձ հետեւեալ հասցէով. Тифлисъ, Макару Чимишкянцу.

**ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.**

0022432
0022431
0022430
0022429
0022428
0022427
0022411
0022410
0022409

2001

2013

5318-5326

NL0022428
NL0022432
NL0022427
NL0022431
NL0022411
NL0022430
NL0022410
NL0022429
NL0022409